ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Տիգրան Ղանալանյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

(ուսումնամեթոդական ձեռնարկ)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 94(479.25)(07)
ԳՄԴ 63.3(5Հ)g7
Ղ 360

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
գիտական խորհուրդը:

Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆ. Է. Մինասյան
պ.գ.թ., դոց. Հ. Մխոյան
Խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան

Ղանալանյան Տիգրան
Ղ 360 Հայկական սփյուռքի պատմության որոշ հիմնախնդիրներ:
Ուսումնամեթոդական ձեռնարկ/ Տ. Ղանալանյան.- Եր.:
ԵՊՀ հրատ., 2021, 84 էջ:

«Հայկական սփյուռքի պատմության որոշ հիմնախնդիրներ» ուսումնամեթոդական ձեռնարկում ներկայացված են դասընթացի նպատակներն ու խնդիրները, մի քանի դասախոսություններ, մասնագիտական գրականություն: Մասնավորապես նորովի ներկայացվում է խորհրդային ժամանակաշրջանի հայրենադարձությունը՝ այն բաժանելով երեք պատմափուլերի: Խոսվում է հայկական սփյուռքի տարածաշրջանային առանձնահատկությունների ու քաղաքական պատկերի մասին: Ուսումնամեթոդական ձեռնարկը կարող է օգտակար լինել Սփյուռքի պատմության վերաբերյալ ինքնուրույն հետազոտություններ իրականացնելու տեսանկյունից:

Ձեռնարկը նախատեսված է բուհերի ուսանողների, հայկական սփյուռքի պատմությամբ զբաղվող մասնագետների և ընդհանրապես այդ հիմնահարցերով հետաքրքրվողների համար:

ՀՏԴ 94(479.25)(07)
ԳՄԴ 63.3(5Հ)g7

ISBN 978-5-8084-2511-8

© ԵՊՀ հրատ., 2021
© Ղանալանյան Տ., 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5
ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 8
ԴԱՍԸՆԹԱՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ 9
ԹԵՄԱ I
1921-1936 ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ..... 10
ԹԵՄԱ II
1946-1949 ԹԹ. ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ..... 18
ԹԵՄԱ III
1962-1988 ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ.....33
ԹԵՄԱ IV
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 44
ԹԵՄԱ V
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ.....58
ԱՄՓՈՓՈՒՄ.....70
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 73

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայկական սփյուռքի պատմության ու արդի հիմնախնդիրների նկատմամբ հետաքրքրությունը վերջին տարիներին չի մարում: Ընդհակառակը նրա շուրջ ծավալվում են հասարակական քննարկումներ, հրապարակ իջնում գիտական նորանոր հետազոտություններ, քայլեր են կատարվում պետություն-սփյուռք հարաբերություններն ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ: Սփյուռքագիտությունը, որն արդեն ունի մի քանի տասնամյակների պատմություն, վերջին շրջանում, թեկուզ երերուն քայլերով, զարգանում է նաև Հայաստանում: Ընդ որում՝ այն ընդգրկում է ոչ միայն պատմագիտության, այլև սոցիոլոգիայի, ազգագրության, գրականագիտության, արվեստագիտության, լեզվաբանության, քաղաքագիտության, հոգեբանության, մշակութաբանության և այլ գիտաճյուղերը: Պատահական չէ, որ վերջին տարիներին Հայաստանում հիմնվեցին սփյուռքի ուսումնասիրության նոր կենտրոններ: Սփյուռքին առնչվող տարաբնույթ առարկաներ սկսեցին դասավանդվել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում: ԵՊՀ-ում հիմնվեց սփյուռքագիտության ամբիոն՝ առանձին մագիստրոսական ծրագրով:

Սփյուռքի[1] պատմությունն ուղղակիորեն կազմում է հայոց պատմության բաղկացուցիչ մասը: Հետևաբար այն անհնար է ուսումնասիրել առանց Հայաստանի պատմության խնդիրներին

[1] Սփյուռք եզրը հայ պատմագրության մեջ հիմնականում կիրառվում է Հայոց ցեղասպանությանը հաջորդող շրջանի մասին խոսելիս: Այս մոտեցումը խիստ պայմանական է, քանզի **diaspora** եզրույթը, որի հայկական համարժեքը **սփյուռքն** է գիտական գրականության մեջ օգտագործվում է հայկական, հունական, հրեական և այլ հավաքականությունների պատմության դեռևս միջնադարյան և ավելի վաղ շրջանի վերաբերյալ: Հայ պատմագրության մեջ նախաեղեռնյան համայնքների համար առավել տարածված է կիրառել **գաղթաշխարհ**, **գաղթավայրեր** եզրերը:

անդրադառնալու: Ընդ որում՝ հայկական սփյուռքի պատմության մասին խոսելիս չենք կարող բավարարվել անգամ այսքանով. անհրաժեշտ է թեկուզ նվազագույն պատկերացում ունենալ համաշխարհային պատմության բազմաթիվ իրադարձությունների ու երևույթների մասին: Առանց ընդունող երկրների սոցիալ-քաղաքական, մշակութային պատմության անհնար է շարադրել տվյալ երկրի հայ համայնքի պատմությունը:

Ստորև փորձ ենք կատարել նորովի անդրադառնալու խորհրդային ժամանակաշրջանի հայրենադարձության պատմությանը՝ այն բաժանելով երեք մասերի՝ 1921-1936 թթ., 1946-1949 թթ. և 1962-1988 թթ.: Անդրադարձ է կատարվում նաև Սփյուռքի ներկայիս պատկերին՝ այն ներկայացնելով ըստ տարածաշրջանների, տրվում է հայկական սփյուռքի քաղաքական ընդհանուր պատկերը:

Ձեռնարկը կարող է օգտակար լինել հատկապես մագիստրոսական ծրագրերի շրջանակներում Սփյուռքի պատմության հիմնախնդիրներն ուսումնասիրելիս:

Սույն ձեռնարկի վերնագրում առկա է որոշ բառը, քանի որ քննարկվում են դասընթացի մեջ ներառված միայն մի քանի թեմաներ, հետևաբար այն չի հավակնում ներառել հայկական սփյուռքի պատմության բոլոր հիմնախնդիրները:

«Հայկական սփյուռքի պատմության հիմնախնդիրներ» դասընթացը մշակվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի ու հայոց պատմության ամբիոնի կրթական ծրագրերի հիմնադրույթներին համապատասխան: Հայկական սփյուռքի պատմությունը հայոց պատմության նորագույն շրջանի կարևոր հիմնախնդիրներից է: Քննարկվող թեմաները գտնվում են ժամանակակից մի շարք ուսումնասիրողների գիտական հետաքրքրությունների ծիրում:

Ներկայում քաղաքական, սոցիալական, ժողովրդագրական, միգրացիոն, մշակութային ոլորտներում տեղի ունեցող իրադարձությունները հանգեցնում են հայկական սփյուռքի պատմության ու արդի բազմաթիվ խնդիրների վերանայման, նոր հարցադրումների առաջքաշման, ինչը թույլ է տալիս ընդլայնել մեր գիտելիքները այնպիսի խրթին երևույթի մասին ինչպիսին սփյուռքն է:

Քննարկվող հարցերը, բացի պատմագիտականից, ունեն կարևոր կիրառական նշանակություն, քանի որ վերջին տասնամյակներին մի շարք պետություններ (այդ թվում՝ Հայաստանը) փորձում են ավելի արդյունավետ ուղիներ գտնել իրենց սփյուռքների հետ համագործակցելու համար: Հայկական սփյուռքի պատմության հիմնախնդիրների ուսումնասիրությունը թույլ կտա ուսանողներին առարկայական պատկերացում կազմել ոչ միայն դրա ձևավորման, պատմության տարբեր փուլերի, այլև ներկայում ծավալվող գործընթացների մասին:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

«Հայկական սփյուռքի պատմության հիմնախնդիրներ» դասընթացի նպատակն է.

1. Ուսումնասիրել «սփյուռք» հասկացությունը, ծանոթանալ սփյուռքների մասին ժամանակակից տեսություններին, դրանց դասակարգումներին, հասկանալ հայկական սփյուռքի ձևավորման պատճառներն ու զարգացման օրինաչափությունները: Այդ հիմնախնդիրների վերլուծությունը հնարավորություն կտա շատ ավելի խորությամբ ընկալել ոչ միայն հայկական սփյուռքի պատմության այս կամ այն իրադարձությունը, այլև ընդհանրապես հայոց պատմության XX-XXI դդ. մի շարք իրողություններ:

2. Քննարկելով առանձին տարածաշրջաններում հայկական համայնքների առանձնահատկությունները՝ ցույց տալ թե ինչպես են դրանք ազդում ժողովրդագրական, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի, ինքնության ձևավորման ու կերպափոխման վրա:

3. Ձևավորել ուսանողի մոտ հետազոտական հմտություններ, որոնք թույլ կտան կատարել ինքնուրույն ուսումնասիրություններ՝ կապված առանձին համայնքի կամ համասփյուռքյան գործընթացների պատմության հետ:

4. Դասընթացի շրջանակներում քննարկվող թեմաները կնպաստեն ուսանողների մոտ հայկական սփյուռքի վերաբերյալ փաստական ու վերլուծական կարողությունների զարգացմանը:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Հայկական սփյուռքի պատմության հիմնախնդիրներ» դասընթացի շրջանակներում դրվում են հետևյալ խնդիրները.

- Ուսումնական ձեռնարկով, դասախոսություններով ու հանձնարարվող գրականության միջոցով ներկայացնել հայկական սփյուռքի պատմության առավել էական հիմնախնդիրները (ստորև կանդրադառնանք միայն սույն ձեռնարկում ներառվածներին):
- Համակարգված կերպով լուսաբանել խորհրդային տարիներին տեղի ունեցած հայրենադարձությունը՝ քննարկելով դրանցում առկա թե՛ որակական, թե՛ քանակական տարբերությունները:
- Բացահայտել ոչ միայն հայրենադարձների գաղթալիքների թվական պատկերը, տարբեր դերակատարների դիքորոշումները, այլև նրանց համարկումը (ինտեգրումը) հայաստանյան կյանքին, փոխհարաբերությունները տեղացիների հետ, ներդրումը Հայաստանի զարգացման ամենատարբեր ասպարեզներում:
- Դասակարգելով տասնյակ հայկական համայնքները, ըստ խոշոր տարածաշրջանների (Միջին Արևելք, հետխորհրդային երկրներ, Ամերիկյան աշխարհամաս, Եվրոպա), ցույց տալ դրանցում առկա էական առանձնահատկությունները՝ դիտարկելով, ժողովրդագրական, սոցիալական, տնտեսական և այլ գործոններ:
- Ուրվագծել հայկական համայնքների քաղաքական մասնակցությունը տեղական պետական համակարգերում:
- Վերհանել Սփյուռքի հայկական կուսակցությունների դերը տարբեր համայնքներում, նրանց ազդեցությունն ու առկա փոփոխությունների միտումները:

ԹԵՄԱ I
1921-1936 ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

1918 թ. մայիսի 28–ին հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Դարեր շարունակ պետականություն չունեցող հայ ժողովուրդը հնարավորություն էր ստանում կառուցելու սեփական հանրապետությունը: Ի սկզբանե ակնհայտ էր, որ գաղթավայրերում առկա նյութական ու մտավոր ներուժը պետք է մասնակից դարձվի այս գործին: Միաժամանակ, Արևելյան Հայաստանի մի մասում ստեղծված պետությունը առնվազն բարոյական պարտականություններ ուներ նաև վերջին տարիներին ցեղասպանության հետևանքով տարբեր երկրներում սփռված, ծայրահեղ ծանր կացության մեջ գտնվող իր հայրենակիցների նկատմամբ: Ուստի ակնհայտ էր, որ ներգաղթի հիմնախնդիրը չէր կարող դուրս մնալ նորաստեղծ պետության ղեկավարության ուշադրությունից:

Հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ զգալի աշխատանքներ կատարվեցին Առաջին հանրապետության տարիներին: Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում Հս. Կովկասում, Իրանում, Իրաքում, Սիրիայում հաստատված գաղթականների ինչպես նաև Ադրբեջանի հայերի ներգաղթի կազմակերպմանը[2]: Նույնիսկ քննարկվում էր ներգաղթի նախարարություն ստեղծելու գաղափարը: Սակայն իր կարճատև գոյության ընթացքում Հայաստանի առաջին հանրապետությունը չհասցրեց լուծել հայրենադարձության հետ կապված այն խնդիրները, որոնց հրատապությունը գիտակցվում էր կառավարության կողմից:

---

[2] 1919 թ. ամռանը ավելի քան 16 հազար հայեր Ադրբեջանից տեղափոխվեցին Հայաստանի առաջին հանրապետություն:

1920 թ. դեկտեմբերի 2–ին Հայաստանը խորհրդայնացվեց: Դրան նախորդել էր սեպտեմբերին սկսված թուրք–հայկական պատերազմը, որի հետևանքով Խորհրդային Ռուսաստանն ու Քեմալական Թուրքիան փաստորեն բաժանեցին Հայաստանը միմյանց միջև: Պետությունը գտնվում էր սարսափելի սոցիալ–տնտեսական իրավիճակում, պետք էր ձեռնամուխ լինել երկրի վերաշինությանը: Սակայն գաղութահայության դրությունը, բնականաբար, այդ ընթացքում չկարգավորվեց: Ավելին՝ 1921 թ. հոկտեմբերին Ֆրանսիայի և Թուրքիայի միջև կնքվելու էր պայմանագիր որով Կիլիկիան հանձնվելու էր վերջինիս:

Այսպիսով, ներգաղթ կազմակերպելու հիմնախնդիրը փոխանցվեց նորաստեղծ ՀԽՍՀ–ին: Խորհրդային տարիներին հայրենադարձության կազմակերպումը կարելի է բաժանել մի քանի փուլերի՝ 1921-1936 թթ., 1946-1949 թթ. և 1962-1988 թթ.:

Խորհրդային կարգերի հաստատմանը հաջորդած առաջին մեկուկես տասնամյակում զգալի աշխատանքներ կատարվեցին Հայոց ցեղասպանության հետևանքով հայրենազրկվածների խնդիրները լուծելու և հայրենիք[3] վերադարձնելու ուղղությամբ: Թե՛ հայրենադարձության կազմակերպման, թե՛ Սփյուռքի հետ կապեր հաստատելու, նրանից Հայաստանի զարգացման հա-

[3] Երբեմն կարելի է հանդիպել տեսակետների, որ արևմտահայերի համար Խորհրդային Հայաստան տեղափոխվելը չի կարելի համարել հայրենադարձություն: Հասկանալիորեն նրանց զգալի մասը ոչ միայն չէր ծնվել ՀԽՍՀ տարածքում, այլև երբևէ մինչ այդ չէր էլ եղել այստեղ: Չնայած դրան, ելնելով այն հանգամանքից, որ ողջ Հայաստանը պետք է դիտարկել հայերի հայրենիք, կարծում ենք հայրենադարձություն եզրը միանգամայն կիրառելի է այս պարագայում: Միաժամանակ հարկ է ընդգծել, որ այսօր հայրենիք հասկացությունը բարդ ու ավելի բարդացող սփյուռքյան ինքնության համատեքստում միարժեքորեն չի ընկալվում. օրինակ՝ մի քանի տասնամյակ առաջ Լիբանանից ԱՄՆ տեղափոխված հայերի համար հայրենիք կարող է ընկալվել թե՛ Լիբանանը, թե՛ Հայաստանի Հանրապետությունը, թե՛ օրինակ Մարաշը, իսկ նրանց զավակների համար միգուցե արդեն ԱՄՆ-ը կամ ՀՀ-ն:

մար նյութական միջոցներ ստանալու համար 1921 թ. հիմնադրվեց Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ):

Առաջին հերթին անհրաժեշտ էր լուծել Իրաքում գտնվող հայերի խնդիրը: Վերջիններիս որոշակի օգնություն էին տրամադրում տեղի բրիտանական իշխանությունները, ինչը, սակայն, շուտով դադարեցվեց: Գաղթականական ճամբարներում հայտնվածները դիմումներ էին հղել դեռևս Առաջին հանրապետության կառավարությանը, սակայն ներգաղթ կազմակերպել չէր հաջողվել: Բրիտանացիների հետ բանակցությունների արդյունքում նրանք իրականացրեցին հայերի փոխադրումը մինչև Բաթում, որտեղ 3000 հոգուց բաղկացած հայրենադարձների առաջին խումբը հասավ 1921 թ. դեկտեմբերին: Այսպիսով, մեկնարկվում էր մի գործընթաց, երբ հայրենիք էին վերադառնում առաջին հերթին այն տարագիր գաղթականները, որոնք նորահաստատ երկրներում գտնվում էին ամենածանր կացության մեջ ու ի վիճակի չէին տեղում շարունակել ֆիզիկական գոյությունը: Այսինքն, խոսելով հայրենադարձության առաջին փուլի մասին, հարկ է նկատի ունենալ, որ այն գերազանցապես արձագանք էր ներգաղթի բազմաթիվ խնդրանքներին և ոչ թե զուտ քաղաքական նկրտումներից ելնող ծրագիր:

Այն երկիրը ուր տեղափոխվելու էին արտասահմանում հայտնված գաղթականները գտնվում էր բացառիկ ծանր կացության մեջ: Դեռևս չէին լուծվել Առաջին աշխարհամարտի ու դրան հաջորդած ռազմաքաղաքական իրադարձությունների ավերիչ հետևանքները: Տակավին անհրաժեշտ էր համառ աշխատանք, որպեսզի տնտեսությունը հասցվեր նախապատերազմական մակարդակին: Միաժամանակ խորհրդային կարգերի հաստատումից հետո սկսել էր Առաջին հանրապետության տարիներին երկրից հեռացած ազգային փոքրամասնությունների,

մասնավորապես ադրբեջանցիների վերադարձը: Պետք է նկատի ունենալ, որ որոշ քանակությամբ հայեր հայրենադարձվում էին նաև խորհրդային այլ հանրապետություններից, որոնք սակայն չէին հաշվառվում որպես հայրենադարձներ՝ ուստի դժվար է խոսել թվական տվյալների մասին:

Նման ծանր պայմաններում Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը հայրենադարձության իրականացման համար ջանում էր ստանալ սփյուռքահայերի նյութական աջակցությունը: Սակայն, այս հարցում կային հավելյալ խոչընդոտներ, որոնք արդեն ստեղծում էր հենց խորհրդային իշխանությունը. այն հայերը, որոնք միանշանակ դրական վերաբերմունք չունեին Հայաստանում հաստատված խորհրդային կարգերի նկատմամբ արժանանում էին բացասական, նույնիսկ թշնամական վերաբերմունքի:

Այսպիսով, չնայած առկա բազմաթիվ խոչընդոտներին, սկսվեց հայրենադարձության գործընթացը: Լսելով Իրաքի հայերի ներգաղթի մասին՝ Սփյուռքի այլ համայնքներում գտնվող արևմտահայ գաղթականները ևս բուռն ցանկություն հայտնեցին տեղափոխվել Խորհրդային Հայաստան: Սակայն իրականացվեց հատկապես ծանր կացության մեջ հայտնված խմբերի հայրենադարձությունը. 1921-1925 թթ. ներգաղթեց մոտ 20 հազար հոգի՝ Իրաքից, Հունաստանից, Թուրքիայից, Իրանից, Սիրիայից:

Էական նշանակություն ունեցավ նաև 1923 թ. Լոզանի խորհրդաժողովը, որի արդյունքներով ակնհայտ դարձավ, որ արևմտահայերը չեն կարող ետ գնալ իրենց հայրենի բնակավայրերը: Մերժվեց նույնիսկ ազգային օջախ ստեղծելու գաղափարը: Շատ–շատերի համար ակնհայտ էր, որ այլևս չեն վերադառնալու Մարաշի, Այնթապի, Զեյթունի, Ադանայի, Արաբակիրի իրենց բնակավայրերը: Ուրեմն ի՞նչ անել այժմ: Հունաստանի, Սիրիայի և այլ գաղթակայաններում շատ ծանր էին բնակության պայման-

ները: Բազմաթիվ տարագիրներ դիմեցին նոր գաղթի՝ մեկնելով ավելի հեռու՝ Ֆրանսիա կամ Լատինական Ամերիկա: Կարևոր նշանակություն ունեցավ 1924 թ. ԱՄՆ-ի կողմից գաղթականներ ընդունելու նոր օրենքը, որը զգալիորեն սահմանափակեց հայերի հնարավոր ներհոսքը: Միաժամանակ անհաջողությամբ պսակվեց մոտ 50 հազար հայ գաղթականների Ազգերի լիգայի միջոցով Հայաստան փոխադրելու ծրագիրը՝ ինչն իրականացնելու ուղղությամբ զգալի ջանքեր էր ներդրել Ֆրիտյոֆ Նանսենը: Հենց այս պայմաններում էր տեղի ունենում հայրենադարձությունը:

1926 թ. հունվարին որոշվեց ժամանակավորապես դադարեցնել ներգաղթը, քանի որ նորեկների տեղավորման հետ կապված առկա էին մի շարք դժվարություններ: Սակայն հատկապես Սփյուռքում գործող հայրենակցական միությունների ջանքերով հայրենադարձությունը փաստորեն չընդհատվեց՝ 1926 թ. Հունաստանից ներգաղթեց 3120 հոգի: Ընդհանուր առմամբ 1926-1929 թթ. Հունաստանից, Թուրքիայից և Ֆրանսիայից հայրենադարձվեց 5863 մարդ: 1931 թ. որոշվեց արտոնել «մասսայական նոր ներգաղթը»: Արդյունքում 1932-1933 թթ. Հունաստանից, Բուլղարիայից և Ֆրանսիայից հայրենադարձվեց ավելի քան 8 հազար հոգի: Իսկ 1936 թ. ներգաղթ տեղի ունեցավ միայն Ֆրանսիայից՝ 1800 հոգի: Այսպիսով, 1926-1936 թթ. ներգաղթեց 22.598 մարդ, որին եթե գումարենք 1921-1925 թթ. տվյալները (19.668) կստացվի 42.286[4]: 1936 թ. հայրենադարձների վերջին խմբի ժամանելուց մեկ տարի անց՝ 1937 թ., փակվեց ՀՕԿ-ը և Սփյուռքի հետ կապերն ամբողջությամբ խզվեցին:

---

[4] Հետաքրքիր զուգադիպությամբ 1921-1936 թթ. ներգաղթողների թիվը մոտ էր 1828-1829 թթ. պարսկահայերի, իսկ 1946-1949 թթ. հայրենադարձների թիվը՝ 1829-1830 թթ. արևմտահայերի թվին, որոնք տեղափոխվել էին Ռուսական կայսրությանն անցած Արևելյան Հայաստանի տարածքներ:

Այս շրջանի ներգաղթի համար հատկանշական է, որ հայրենակցական միությունների, ՀԲԸՄ (Հայկական բարեգործական ընդհանուր միություն) նյութական աջակցությամբ Հայաստանում կառուցվեցին նոր ավաններ, որտեղ էլ տեղավորվում էին նորեկներից շատերը. Նոր Արաբկիր, Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա, Նոր Խարբերդ, Նուբարաշեն և այլն:

Հետաքրքրական են նորեկների հարաբերությունները տեղացի բնակչության հետ: Պետք է հիշել, որ 1920-ական թթ. Հայաստանի բնակչության մեջ մեծ թիվ էին կազմում մի քանի տարի առաջ տեղափոխված արևմտահայ գաղթականները: Չնայած դրան, նորեկները կազմեցին առանձին խումբ, որին տեղացիները տվեցին «պոլսեցի» անվանումը: Դրանով վերջիններս պետք է տարբերակվեին մինչ այդ արդեն Հայաստանում գտնվող հարյուր հազարավոր արևմտահայերից: Արդեն 1930-ական թթ. եկածներին տրվեց «ֆրանսիացի» անվանումը, քանի որ այդ տարիներին հայրենադարձվածների մեջ մեծ թիվ էին կազմում ֆրանսահայերը: Վերջիններս աչքի էին ընկնում իրենց ազատամտությամբ, բացասական երևույթներից դժգոհելով, նաև եվրոպական հագուստով: Նրանք նոր շունչ հաղորդեցին հատկապես Երևանի քաղաքային միջավայրին: Ի դեպ, հենց նրանք «բերեցին» առ այսօր հայերեն «շնորհակալություն»-ին զուգահեռ կիրառվող «մերսի» բառը:

Ընդհանուր առմամբ 1921-1936 թթ. հայրենադարձությունն ունեցավ դրական նշանակություն, քանզի հայրենիք էին վերադառնում մարդիկ, որոնք նորահաստատ երկրներում չափազանց ծանր կացության մեջ էին հայտնվել: Խորհրդային իշխանությունների նկատմամբ դրականորեն տրամադրված ՍԴՀԿ, ՌԱԿ կուսակցությունները, Հայ Առաքելական եկեղեցին, ՀԲԸՄ-ը, հայրենակցական մի շարք միությունները ծանրակշիռ ներդրում

ունեցան այս փուլի ներգաղթի կազմակերպման մեջ: Հայաստան վերադարձողները կարճ ժամանակ էին ապրել օտար երկրներում: Եվրոպական կենցաղն ու մշակույթը որոշ չափով յուրացրել էին միայն 1930-ական թթ. եկածները, որոնք առանձնանում էին տեղացիներից: 1930-ական թթ. խորհրդային ամբողջատիրական իրականությունը, որտեղ ամեն կերպ ճնշվում էր ազատամտության ցանկացած դրսևորում, թույլ չտվեց ոչ մեծաթիվ ներգաղթողներին ունենալ շոշափելի ազդեցություն ընդունող հասարակության վրա: Սակայն հայրենադարձության ընդհատումից ուղիղ տասը տարի անց՝ 1946 թ., այն վերսկսեց սկզբունքորեն նոր ծավալով և ունեցավ ակնառու ազդեցություն խորհրդահայ իրականության վրա:

Հարցադրումների քննարկում թեմայի շրջանակներում

- Ի՞նչ իրավիճակում էր գտնվում Խորհրդային Հայաստանը 1920-1930-ական թթ.: Որքանո՞վ էր հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը թույլ տալիս կենսագործել զանգվածային հայրենադարձություն:
- Ո՞ր երկրներից էին վերադարձող հայերը: Ի՞նչ ակնկալիքներ նրանք ունեին Հայաստանից:
- Ինչպիսի՞ն էր ազգային կուսակցությունների դիրքորոշումը ներգաղթի նկատմամբ:
- Մեկուկես տասնամյակում տեղի ունեցած հայրենադարձությունը ի՞նչ չափով բավարարեց Սփյուռքում առկա պահանջարկը:
- Ինչպե՞ս ընդունվեցին ներգաղթողները տեղացիների կողմից:

Հետազոտական աշխատանքների թեմաներ[5]

- Սփյուռքի կուսակցությունների դիրքորոշումը Խորհրդային Հայաստանի նկատմամբ:
- Ֆ. Նանսենի գործունեությունը հայ գաղթականության խնդիրների լուծման ուղղությամբ:
- Հայրենադարձների համար ավանների կառուցումը:
- ՀՕԿ գործունեությունը և ներգաղթը:

[5] Այս և հաջորդիվ շարադրված թեմաների համար օգտակար կարող է լինել սույն ձեռնարկում տեղ գտած սկզբնաղբյուրների և գրականության ցանկը:

ԹԵՄԱ II
1946-1949 ԹԹ. ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

1945 թ. ավարտվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Հայ ժողովուրդը դրանում ունեցավ աննախադեպ մասնակցություն: Ընդ որում, բացի Խորհրդային Հայաստանից, հարյուր հազարավոր հայեր զորակոչվեցին նաև ԽՍՀՄ այլ հանրապետություններից[6]: Տասնյակ հազարավոր հայեր էլ մասնակցեցին պատերազմին դաշնակից պետությունների զորքերի կազմում: Սփյուռքահայությունը ձեռնամուխ եղավ «Սասունցի Դավիթ» տանկային շարասյան ստեղծմանը: Չնայած ռազմական գործողությունները չընդգրկեցին Հայաստանի տարածքը, սակայն հայերը շոշափելի ներդրում ունեցան Գերմանիայի ու նրա դաշնակիցների ջախջախման գործում: Կային ակնկալիքներ, որ այս անգամ կարող են հաշվի առնվել հայոց կենսական շահերը:

ԽՍՀՄ պետական քաղաքականության տեսանկյունից ևս հնարավոր էր համարվում տարածքային պահանջների ներկայացումը Թուրքիային: Այս գործում որպես հիմնավորում խորհրդային իշխանությունները փորձեցին օգտագործել աշխարհացրիվ հայերի սեփական հայրենիք վերադառնալու հանգամանքը: Ուստի հայտարարվեց, որ Խորհրդային Հայաստանը ձեռնամուխ է լինելու հայերի հայրենադարձության կազմակերպմանը: Լուրը սպասելի ոգևորության ալիք բարձրացրեց Սփյուռքում: Բազամահազար հայեր ենթադրեցին, թե կարողանալու են վերադառնալ իրենց պապենական բնակավայրերը (օրինակ՝ Սասուն, Վան, Մուշ), սակայն իրականում խոսք էր գնում 1914 թ.

---

[6] Ըստ 1939 թ. ԽՍՀՄ մարդահամարի՝ Վրացական ԽՍՀ-ում ապրում էր 415.013 (49.705-ը՝ Աբխազական ԻԽՍՀ-ում), Ադրբեջանական ԽՍՀ-ում՝ 388.025 (132.800-ը՝ ԼՂԻՄ-ում, 13.350-ը՝ Նախիջևանի ԻԽՍՀ-ում), ՌՍԴԽՀ-ում՝ 218.156 հայ:

ռուս-թուրքական սահմանը վերականգնելու՝ այսինքն՝ Կարսն ու Արդահանը ԽՍՀՄ-ին փոխանցելու մասին: Ընդ որում, մեծ էր հավանականությունը, որ իրերի հաջող զարգացման պարագայում Արդահանը կկցվեր Վրացական և միայն Կարսը՝ Հայկական ԽՍՀ-ին: Միաժամանակ հայրենադարձությունը պետք է ունենար բացառիկ քաղաքական հնչեղություն՝ նոր ձևավորվող Սառը պատերազմի (ինչպես սփյուռքահայերն էին հաճախ անվանում «ցուրտ» կամ «պաղ» պատերազմի) պայմաններում կոմունիստներն ապացուցելու էին, որ կապիտալիստական երկրներից մարդիկ տենչում են փոխադրվել «խորհրդային դրախտ»: Չնայած Թուրքիայից հայկական տարածքների վերադարձը այդպես էլ իրականություն չդարձավ, սակայն հայրենադարձություն ամեն դեպքում որոշվեց կազմակերպել:

1945 թ. նոյեմբերի 21-ին ԽՍՀՄ ժողկոմխորհը ընդունեց որոշում. «*Ուշադրության առնելով արտասահմանում ապրող հայերի դիմումները՝ նրանց հայրենիք՝ Սովետական Հայաստան վերադառնալու թույլտվության մասին և ՀԽՍՀ ղեկավար մարմինների միջնորդությունը, թույլատրել ՀԽՍՀ Ժողկոմխորհին կազմակերպել արտասահմանյան երկրներում ապրող հայերի վերադարձը, որոնք այդ մասին ցանկություն են հայտնել*»: Արդեն դեկտեմբերին ստեղծվեց «ՀԽՍՀ ժողկոմխորհին կից արտասահմանից ներգաղթող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե», իսկ ներգաղթողների բնակարանային խնդիրները լուծելու համար երկու ամիս անց կազմվեց ՀԽՍՀ ժողկոմխորհին կից «Վերաբնակեցման վարչություն»: Հայրենիք վերադարձող սփյուռքահայերի ընդուման նպատակով ստեղծվեցին ընդունման կայաններ Բաթումում, Ջուլֆայում և Բաքվում: Վերջին երկուսը ծառայելու էին իրանահայերին, իսկ մյուսները Հայաստան էին տեղափոխվելու Բաթումով:

Հայրենադարձությունն իրականացնելու համար տեղերում կազմվեցին ներգաղթի կոմիտեներ, որոնց աշխատանքներում ներգրավվեցին գրեթե բոլոր կառույցների ներկայացուցիչները՝ բացի ՀՅԴ-ից: Չնայած սկզբնական շրջանում Դաշնակցությունը ևս կողմ էր հայրենադարձությանը, սակայն այն դիտարկում էր Թուրքիայից վերադարձվելիք տարածքների խնդրի լուծման համատեքստում: Մինչդեռ երբ պարզ դարձավ, որ հողային պահանջները չեն բավարարվելու, դաշնակցականներին էլ թույլ չտրվեց մասնակցել ներգաղթի կազմակերպմանը՝ կուսակցությունը որդեգրեց ընդդիմադիր կեցվածք: Մասնավորապես ՀՅԴ-ականներն ասում էին, որ ՀԽՍՀ տարածքը ի վիճակի չէ ընդունելու մեծ քանակությամբ սփյուռքահայերի, կազմակերպված համայնքներում (հատկապես Մերձավոր Արևելքի) հայերը կարողանում են պահպանել իրենց ինքնությունը, այնինչ Խորհրդային Ռուսաստանում ու ԽՍՀՄ այլ հանրապետություններում նրանք զրկված են ակտիվ համայնքային գործունեություն ծավալելու հնարավորությունից և ավելի շատ են ենթակա ուծացման: Հետևաբար, եթե խորհրդային իշխանությունների նպատակը հայահավաքն է, ապա շատ ավելի առաջնահերթ է հենց այս հայերի հայրենադարձությունը, իսկ ԽՍՀՄ-ից դուրս գտնվող հայության ներգաղթը նպատակահարմար է կազմակերպել Արևմտյան Հայաստանի տարածքների միացումից հետո:

Սկզբունքորեն տարբերվում էր ՍԴՀԿ ու ՌԱԿ դիրքորոշումը: Այս երկու կուսակցություններն էլ, որոնք ի սկզբանե որդեգրել էին Խորհրդային Հայաստանի հանդեպ դրական կեցվածք, որոշեցին ամեն կերպ աջակցել ներգաղթին: Պատահական չէ, որ այս կուսակցությունների շատ անդամներ հայրենադարձվեցին: Իհարկե որոշեցին ներգաղթել նաև մեծ թվով դաշնակցականներ: Բոլորից էլ պահանջվում էր դուրս գալ կուսակցություններ-

րից, քանի որ ՀԽՍՀ-ում, բացի Կոմկուսից, այլ քաղաքական կառույցներ չկային: ՀՅԴ-ականների պարագայում հաճախ պարտադրվում էր նաև մամուլում հանդես գալ կուսակցության դեմ հրապարակումներով:

Հայրենադարձության հանդեպ միանշանակ դրական կողմնորոշում որդեգրեց Հայ Առաքելական եկեղեցին, որի տեղական ներկայացուցիչները ջանք ու եռանդ չէին խնայում գործը հաջողությամբ կազմակերպելու ուղղությամբ: Համանման էր հայ ավետարանականների մոտեցումը: Այլ էր պարագան Հայ Կաթողիկե եկեղեցու. չնայած տեղերում շատերը մասնակցեցին կազմակերպչական աշխատանքներին, սակայն եկեղեցու պատրիարք-կաթողիկոս Գրիգոր-Պետրոս Աղաջանյանը հանդես եկավ գործընթացի դեմ: Նա նշում էր, որ խորհրդային պետությունը անհավատների երկիր է, և հայրենադարձվողները չեն կարողանալու մնալ կաթոլիկ: Ի դեպ, հետագայում բազմաթիվ հայրենադարձների համար ցնցող բացասական ազդեցություն ունեցավ եկեղեցու դերը հայրենիքում: Եկողների մեծ մասի համար այն շատ կարևոր նշանակություն ուներ՝ մինչդեռ պատկերը միանգամայն այլ էր Հայաստանում, որտեղ վերջին տասնամյակներին ամեն ինչ արվում էր եկեղեցին վարկաբեկելու ու թուլացնելու համար:

Խոսելով սփյուռքահայ կառույցների մասին՝ անհրաժեշտ է ընդգծել ՀԲԸՄ մասնակցությունը Մեծ հայրենադարձությանը: Ներգաղթի համար մեկ միլիոն դոլարի հանգանակությունը ՀԲԸՄ-ն սկսեց 1946 թ. ապրիլին և ավարտեց 1947 թ. հունիսին: Այն ունեցավ անսպասելի մեծ հաջողություն: ԱՄՆ-ում, Կանադայում և Հարավային Ամերիկայի երկրներում հանգանակության արդյունքն էր 1.073.810, իսկ այլ երկրներում՝ 339.232 դոլար: 1947 թ. համար նախատեսվեց կազմակերպել կրկին մեկ միլիոն

դոլարի հանգանակություն, սակայն 1948 թ. հունիսին, երբ ամփոփվեցին տվյալները, պարզվեց, որ ԱՄՆ-ում ու Կանադայում հավաքվել է 331.130 դոլար և մոտ 200 հազար էլ՝ այլ երկրներում:

Սփյուռքի համայնքներ մեկնած խորհրդային գործակալները, որոնք պետք է կատարեին նախապատրաստական աշխատանքներ, սկսեցին համոզել սփյուռքահայերին, թե Խորհրդային Հայաստանը տնտեսապես խիստ զարգացած երկիր է, որն ի վիճակի է ընդունել իր տարագիր հայրենակիցներին և նրանց ապահովել լավագույն կյանքով: Հռչակվում էր թե Խորհրդային Հայաստանը պատրաստ է ընդունել 400 հազար մարդու: Չնայած սա բացարձակ աղերս չուներ իրականության հետ, սակայն հազարավորները խաբվում էին՝ մտածելով թե իրենց հայրենիքում սպասում է բարեկեցիկ կյանք: Որոշակի ազդեցություն ունեցավ նաև նորավարտ պատերազմում ԽՍՀՄ հաղթանակն ու դրանով պայմանավորված հեղինակության բարձրացումը: Սակայն ամենավճռական նշանակությունն անշուշտ ունեցավ այն հանգամանքը, որ տասնամյակներ շարունակ սփյուռքահայերը առարկայական պատկերացումներ չունեին Խորհրդային Հայաստանի իրականության մասին: Դա արդեն պայմանավորված էր ԽՍՀՄ փակ երկիր լինելու հանգամանքով: Ցեղասպանությունից մազապուրծ եղած և աշխարհով մեկ ցրված հայերի համար, իհարկե, շատ հաճելի էր հավատալ թե իրենց հայրենիքի մի հատվածում հաջողվել է ստեղծել հզոր ու զարգացած պետություն, որն ի վիճակի է ընդունելու հարյուր հազարավոր տարագիրների[7]:

---

[7] Պատահական չէ, որ նույն ժամանակ «խորհրդային դրախտում» ապրելու բախտ ունեցած, սակայն Երկրորդ աշխարհամարտի ընթացքում տեղահանված բազմաթիվ քաղաքացիներ ու ռազմագերիներ փորձում էին ամեն կերպ խուսափել հայրենադարձվելուց: Ի վերջո հազարավորները Գերմանիայից տեղա-

Առկա ոգևորության պայմաններում շուտով հայրենադարձվելու համար ցուցակագրվածների թիվը հասավ 360 հազարի: Ըստ երկրների՝ այդ պատկերն ուներ հետևյալ տեսքը. Սիրիա և Լիբանան՝ 140 հազ., Իրան 60 հազ., Ֆրանսիա՝ 50 հազ., Եգիպտոս՝ 30 հազ., Հարավային Ամերիկա՝ 29 հազ., Թուրքիա՝ 20 հազ., Հունաստան՝ 20 հազ., Բուլղարիա՝ 9 հազ., Ռումինիա և ԱՄՆ՝ հազարական մարդ: Սակայն 1946 թ. համար նախատեսվում էր ընդունել միայն 28.800 մարդու:

1946 թ. հունիսի 23-ին Բեյրութի նավահանգստից Բաթում ուղևորվեց «Տրանսիլվանիա» շոգենավը, որի մեջ գտնվում էր 1806 մարդ: Դրանով սկսվեց զանգվածային Մեծ հայրենադարձությունը: Հունիսի 27-ին առաջին ներգաղթողները հասան Բաթում, իսկ հուլիսի 2-ին՝ Երևան, որտեղ նրանց դիմավորեցին հազարավոր հայրենակիցներ: Երկրորդ և երրորդ քարավանները Բեյրութից Բաթում ժամանեցին համապատասխանաբար հուլիսի 12-ին և 17-ին, չորրորդը՝ օգոստոսին, հինգերորդը և վեցերորդը՝ սեպտեմբերին: 1946 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում Հունաստանից հայրենիք եկավ 4974 մարդ:

Այսպիսով, 1946 թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից, Բուլղարիայից և Ռումինիայից Խորհրդային Հայաստան ներգաղթեց 10.801 ընտանիք կամ 50.949 մարդ: Ըստ առանձին երկրների՝ պատկերը հետևյալն էր. Իրանից գաղթեց 20.597 հոգի, որը կազմում էր հայրենադարձների 40,5%-ը, Սիրիայից և Լիբանանից՝ 19.253 (37.8 %), Հունաստանից՝ 4974, Բուլղարիայից՝ 4383, Ռումինիայից՝ 1738 մարդ: Քաղաքներում տեղավորվեց 21.704 (այդ թվում Երևանում՝ մոտ 14 հազար), շրջկենտրոններում՝ 3994, կոլտնտե-

---

փոխվեցին ԱՄՆ ու այլ երկրներ, չնայած խորհրդային իշխանությունները ջանում էին կազմակերպել նրանց բռնի հայրենադարձությունը:

սություններում՝ 17.863, սովխոզներում (խորհտնտեսություններում)՝ 3185 մարդ:

Այդպիսով էապես գերազանցվեց հայրենադարձների ծրագրված չափաբաժինը՝ 28.800 հոգու փոխարեն ընդունվեց 50.949-ը: 1946 թ. վերջում սկսվեցին ծրագրվել հաջորդ տարի կազմակերպվելիք հայրենադարձության հետ կապված խնդիրները: 1947 թ. որոշվեց ընդունել շուրջ 63 հազար սփյուռքահայերի:

Կարևոր նշանակություն ուներ առավել ծանր կացությունում հայտնված համայնքներից հայրենադարձության կազմակերպումը: Հատկապես բարդ իրադրություն էր ստեղծվել Հունաստանում և Իրանում: Սակայն 1947 թ. Իրանից ներգաղթ կազմակերպելու ծրագրերը չիրականացան՝ կապված իրանական կառավարության դրած արգելքի հետ: Դրա հետևանքով հայրենադարձվելու պատրաստ, իրենց ունեցվածքը վաճառած հազարավոր իրանահայեր հայտնվեցին ծանրագույն վիճակում:

Որոշակի խոչընդոտներ առաջացան նաև ԱՄՆ-ի և Հարավային Ամերիկայի հայկական համայնքներից հայրենադարձության կազմակերպման գործում: ԱՄՆ-ի, Բրազիլիայի, Ուրուգվայի և Արգենտինայի կառավարությունները մերժեցին վիզա տրամադրել Հայկական ԽՍՀ մինիստրների խորհրդի ներկայացուցիչներին՝ այդ երկրներ մեկնելու և հայրենադարձությունը կազմակերպելու համար: Ստեղծված նոր կացությունն առաջ բերեց հայրենադարձության նախնական ծրագրերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն:

Նախապատրաստական աշխատանքներից հետո՝ 1947 թ. հուլիսին վերսկսվեց սփյուռքահայերի հայրենադարձությունը և մինչև տարվա վերջը հայրենիք վերադարձավ 8521 ընտանիք կամ 35.401 մարդ: Ըստ առանձին երկրների՝ ներգաղթել են Սիրիայից և Լիբանանից՝ 12.985, Հունաստանից՝ 13.241, Ֆրան-

սիայից՝ 5260, Եգիպտոսից՝ 1669, Պաղեստինից՝ 1250, Իրաքից՝ 856, ԱՄՆ-ից՝ 151, Չինաստանից՝ 16 մարդ:

1948 թ. նախատեսվում էր ՀԽՍՀ ընդունել մոտ 15 հազար հայրենադարձների: Սակայն ՀԿ(բ)Կ կենտկոմի բյուրոն 1947 թ. դեկտեմբերին գտավ, որ անցած երկու տարում ներգաղթածների բնակարանային և աշխատանքային ապահովման գործում առաջացել են մի շարք դժվարություններ, ուստի նպատակահարմար կլինի 1948 թ. ընդունել 10 հազարից ոչ ավելի սփյուռքահայերի: Կենտկոմի բյուրոն միաժամանակ պարտավորեցրեց հանրապետության կառավարությանը, կուսակցական քաղկոմ-շրջկոմներին, տեղական սովետների գործկոմներին, համապատասխան մինիստրություններին ու գերատեսչություններին՝ առաջիկայում հիմնական ուշադրությունը կենտրոնացնել 1946-1947 թթ. ժամանած հայրենադարձների բնակարանային և աշխատանքային պայմանների արմատական բարելավմանը:

1948 թ. փետրվարին որոշում կայացվեց 1948 թ. հունիս-օգոստոս ամիսների ընթացքում շուրջ 10 հազար սփյուռքահայերի ընդունելու մասին: Սակայն 1948 թ. հնարավոր եղավ հայրենիք վերադարձնել միայն 897 ընտանիք՝ 3092 մարդու, որից 2023-ը՝ Եգիպտոսից, 1046-ը՝ Հունաստանից և 23-ը՝ Չինաստանից:

ՀԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր ներգաղթի կոմիտեն նախապես մտադրվել էր 1949 թ. ընդունել մոտ 10 հազար հայրենադարձների՝ սակայն 1946-1948 թթ. ժամանածների բնակարանային և աշխատանքային ապահովման հոգսերը մի կողմից, միջազգային իրադրության սրումը մյուս կողմից, հնարավորություն չտվեցին իրականացնել այդ ծրագրերը: Արդյունքում 1949 թ. ԱՄՆ-ից հայրենիք եկավ 162 հոգի: Նրանք փաստորեն

1948 թ. ներգաղթողների խմբից հետ մնացածներն էին: Այդ խումբը 1949 թ. փետրվարի 23-ին Բաթումից ուղևորվեց Երևան:

Կարևոր էր 1946-1949 թթ. հայրենադարձվածների համարկման (ինտեգրման) խնդիրը: Հայրենադարձների առաջին ծանոթությունը խորհրդային երկրի հետ տեղի ունեցավ ընդունման կայաններում (Բաթում, Բաքու, Ջուլֆա), երբ նորեկները դեմ առ դեմ բախվեցին դառն իրականությանը՝ տեսնելով սև հացը կշեռքին, այն դեպքում, երբ իրենց ստիպում էին հետները վերցված սննդամթերքը ջուրը նետել՝ ասելով, թե տեղ հասնելուն պես ամեն ինչ կունենան: Տեղացիները մոտենում ու հարցնում էին, թե ինչո՞ւ են եկել, մի՞թե իրենց ապրած երկրներում ավելի վատ էր վիճակը: Տեսածը և լսածը սառը ցնցուղի ազդեցություն էր ունենում, մարդիկ հասկանում էին, որ խաբված են, սակայն հետդարձի ճանապարհն արդեն փակ էր: Երբ բեռնատար վագոններով նորեկներին տեղափոխում էին Հայաստան՝ նրանք դեռ հույս ունեին, որ իրենց այլ պայմաններ են սպասում հայրենիքում, սակայն տեղ հասնելուն պես հասկացան, որ այստեղ վիճակն ավելի լավ չէ: Տեղացիների հագուստը, խանութների դատարկությունը, մթերքի կտրոնները, հացի հերթերը[8] ի չիք դարձրին ծաղկող հայրենիքի առասպելը: Տեղաբաշխման սխալ քաղաքականության հետևանքով էլ ավելի խորացավ հուսահատությունը: Հաճախ քաղաքաբնակներին ուղարկում էին գյուղական

[8] Հերթերի՝ խորհրդային իրականության այդ անբաժանելի երևույթի մասին հայրենադարձը գրում է իր արտասահմանի բարեկամին. «*Հոս շատ հանգիստ ենք, շատ ապահով ենք, օրերնիս ուրախ կանցնի: Հերթ կկանգնինք քիլո մը շաքար կառնինք՝ կուրախանանք, կարագ կառնինք՝ նորեն կուրախանանք: Դուք այդ ուրախությունները չունիք*»: Ընդհանրապես հայրենադարձության ազգագրական մի շարք խնդիրների տեսանկյունից չափազանց արժեքավոր է Արմենուհի Ստեփանյանի աշխատությունը: Այս և հայրենադարձների խոսքի հաջորդ մեջբերումները (դրանցում պահպանվել է հեղինակի շարադրած ուղղագրությունը) տե՛ս Ստեփանյան Ա., XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Երևան, 2010:

վայրեր ու թողնում անօգնական՝ միայնակ կիսավեր տներում: Այսպես 1946 թ. Սոֆիայից եկած հայրենադարձը նշում էր. «*Հայաստան եկանք նե մեզի փարին գյուղերը, փուն չիկար, գոմի պես փեղ մըն էր, ջուրերը վերևեն կվազեին, գեփինը՝ հող, ունեցած–չունեցածնիս ամեն բան փչացավ*»: Լինում էր և հակառակը, երբ գյուղաբնակ հողագործներին տեղավորում էին քաղաքում: Սա ներքին տեղափոխությունների ու դժգոհությունների տեղիք էր տալիս:

Ներգաղթածները ստիպված էին հարմարվել և հոգևոր արժեքների փոփոխությանը: Նրանք տեղում համոզվեցին, որ կրոնն ու եկեղեցին, ինչպես նաև ժողովրդական տոներն ու ծեսերը ոչ միայն անտեսված, այլև հաճախ արգելված են խորհրդային երկրում: Բնութագրական է, որ աթեիզմի քաղաքականության պայմաններում ամենուր Վ. Լենինի ու Ի. Ստալինի նկարները տեսնելով՝ հայրենադարձները միմյանց հումորով ասում էին. «*ասոնք ալ փեղացիներու սուրբերն են էղեր*»:

Ներգաղթածների համար առավել դժվար էր ընտելանալ օտարացմանը, անվստահությանը, թերագնահատմանը և ներգաղթածի ու տեղացու նկատմամբ եղած տարբերակված մոտեցմանը: Այս առումով առաջնային նշանակություն ունեն հայրենադարձների և տեղացիների միջև փոխհարաբերությունները: Ստեղծված ծանր կացությունում եկվորները պահանջում էին իրենց խոստացվածը, իսկ տեղացիներն էլ բողոքում էին նորեկների ներկայությունից, քանի որ եղածն իրենց էլ չէր բավարարում: Տեղական պայմաններին հարմարվելուն խոչընդոտում էին մի շարք հանգամանքներ՝ քաղաքական, գաղափարական մտածելակերպի, աշխարհայացքի, հոգեբանության, լեզվաբարբառային տարբերությունները:

Տեղացիների կողմից հայրենադարձների նկատմամբ բացասական վերաբերմունքի դրսևորում դարձավ «ախպար» բառի կիրառումը, որը ուներ ընդգծված բացասական իմաստ: Դա հատկապես տարածված էր Երևանում: Հայրենադարձներից շատերը համարում էին, որ իրենք ավելի օտար են Խորհրդային Հայաստանում, քան այն երկրներում որտեղից եկել էին: Այսպես նրանցից մեկը նշում էր. «*Արաբներն անգամ մեզ ավելի սիրեցին, քան հայաստանցիները*»:

Ներգաղթի սխալ կազմակերպման գլխավոր ցուցիչներից է այն, որ առաջին հնարավորության ստեղծումից հետո զգալի թվով հայրենադարձներ արտագաղթեցին: Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ ծանրագույն պայմաններում հայտնված հայրենադարձների մի մասը, փորձում էր հեռանալ ՀԽՍՀ-ից անօրինական ճանապարհով՝ հատելով Թուրքիայի սահմանը: Այսպես, դեռևս հայրենադարձության մեկնարկից հետո մեկ տարվա ընթացքում՝ մինչև 1947 թ. հունիսը, Թուրքիայի հետ սահմանը կարողանում են խախտել և անցնել 21 մարդ, իսկ 110-ը բռնվում են այդպիսի փորձ կատարելիս: Հատուկ որոշմամբ սահմանամերձ շրջաններում բնակեցված հայրենադարձներին սկսում են տեղափոխել հանրապետության այլ տարածքներ:

1949 թ. հունիսին ԽՍՀՄ իշխանությունները նախաձեռնեցին Անդրկովկասի և Սև ծովի առափնյա շրջանների հայերի զանգվածային աքսորն Ալթայի երկրամաս: Հիմնական մեղադրանքը ՀՅԴ-ին կամ պատերազմի ժամանակ Հայկական լեգեոնին անդամակցած լինելն էր: Այս գործընթացի շրջանակներում բռնադատվեցին մոտ մեկուկես հազար հայրենադարձներ: Հետաքրքիր է, որ հաճախ Մեծ հայրենադարձության վերաբերյալ քննարկումներում նշվում են աքսորվածների շատ ավելի մեծ թվեր, կամ կատարվում ընդհանրացումներ, թե «սփյուռքահայե-

ին խաբելով բերեցին Հայաստան, հետո էլ աքսորեցին Սիբիր»[9]: Տեղահանման որոշման մասին իմանալիս որոշ հայրենադարձներ կարծել էին, թե իրենց հետ են ուղարկելու ելքի երկրներ: Այդպիսի մի դրվագի մասին բռնագաղթի ենթարկվածներից մեկը պատմում է. «*Մեզ լցրեցին բեռնատար վագոնները, և դռները փակվեցին, թվաց թե աշխարհը մթնեց ու ամեն բան վերջացավ: Վագոնում Հունաստանից ներգաղթած մի ծեր կին կար, որը կարծում էր, թե իրենց հետ են ուղարկում Հունաստան ու ամբողջ ճանապարհին հարցնում էր, թե՝ «Աթենք չհասա՞նք*»:

Սփյուռքում զանգվածային հայրենադարձության ունեցած հետևանքների թվում պետք է նշել, որ խեղվեցին բազմահազար սփյուռքահայերի ճակատագրեր՝ ովքեր վաճառել էին իրենց ողջ ունեցվածքը և սպասում էին Հայաստան ժամանելուն (հատկապես ծանր էր Իրանի տարբեր շրջաններում իրենց գույքը վաճառած և Թեհրանում հայտնվածների կացությունը): Սակայն, հայրենադարձների ընդունման թվաքանակի սահմանափակման, ապա ընդհանրապես գործընթացի դադարեցման հետևանքով նրանց մի ստավար հատված հայտնվեց ծանրագույն կացության մեջ:

Այսպիսով, 1946-1949 թթ. հայրենադարձվեց 89.750 հոգի, որոնք չնայած բոլոր վերը թվարկված բացասական պայմաններին, կարևոր ավանդ ունեցան Խորհրդային Հայաստանի զարգացման բոլոր ոլորտներում: Այսպես՝ Բալկանյան երկրներից եկածների մեջ մեծ թիվ էին կազմում բարձր որակավորում ունեցող մետաղագործները, մեխանիկները, կոշկակարները, դերձակները, լիբանանահայերի ու եգիպտահայերի մեջ՝ վարորդներն ու ավտոմեքենա նորոգողները: Ընդհանրապես ներգաղ-

[9] Սա վկայում է այն մասին, որ աքսորը դարձել էր հայրենադարձների կոլեկտիվ հիշողության մաս:

թողների մեջ հաճախ կարելի էր հանդիպել ատաղձագործների, վարսավիրների, լուսանկարիչների: Պարսկահայերի ու բեյրութահայերի մեջ շատ էին կահույքագործները, ժամագործներն ու ոսկերիչները: Ռումինիայի ու Ֆրանսիայի քաղաքներից եկածների մեջ կային արհեստավարժ մատուցողներ, որոնց կարիքը շատ էր զգացվում բարձրաստիճան հյուրերի ընդունելության ժամանակ՝ մանավանդ եթե հաշվի առնենք սպասարկման ոլորտի անմխիթար վիճակը խորհրդային երկրում: Հայրենադարձ արհեստավորները, բացի հմտություններից, բարձր կենցաղային մշակույթ էին բերում Խորհրդային Հայաստան:

Հայրենադարձների մեջ կային արհեստավարժ բժիշկներ: Մինչև 1970-ական թթ. Երևանում աշխատող ատամնաբույժների մեծ մասը ներգաղթածներ էին: Խիստ շոշափելի էր օտար լեզուների մասնագետների ներկայությունը. Երևանի ու Լենինականի բարձրագույն ու միջին մասնագիտական հաստատություններում անգլերեն ու ֆրանսերեն էին դասավանդում հիմնականում հայրենադարձները:

1946-1949 թթ. ներգաղթողները էական ներդրում ունեցան նաև մշակույթի ասպարեզում: Կարելի է հիշատակել Հարություն Կալենցի, Պետրոս Կոնտուրաջյանի, Ժան Տեր-Մերկերյանի, Գոհար Գասպարյանի, Երվանդ Մանարյանի, Վարդուհի Վարդերեսյանի և շատ ուրիշների անունները:

Մեծ հայրենադարձությունը, ինչպես արդեն նշվեց, զգալի դրական ազդեցություն ունեցավ կենցաղային մշակույթի ասպարեզում: Օրինակ՝ հենց Մեծ հայրենադարձության ժամանակ եկածները իրենց հետ բերեցին այսօր Հայաստանում սովորական դարձած սուրճ խմելու ավանդույթը: Նրանց շնորհիվ նաև լայն տարածում գտավ բաստուրմայի, լահմաջուի պատրաստումը, սննդակարգ ներմուծվեց ձիթապտուղը: Մեծ համարում սկսե-

ցին ունենալ նորեկների սարքած խմորեղենները: Ընդ որում, հայրենադարձները իրենց հետ բերում էին թե՛ արևմտահայկական ավանդական խոհանոցը, թե՛ տարբեր երկրներում ապրած շրջանում յուրացրած կերակրատեսակները: Հայրենադարձ դերձակների ու կոշկակարների շնորհիվ տեղացիները կարողացան հաղորդակցվել եվրոպական նորաձևությանը, որն ազդեցություն ունեցավ քաղաքային (հատկապես Երևանի) մշակույթի վրա:

Հարցադրումների քննարկում թեմայի շրջանակներում

- Ինչպե՞ս էր փորձում ԽՍՀՄ-ը օգտագործել հայերի հայրենադարձությունը իր կայսերապաշտական քաղաքականության մեջ:
- Ի՞նչ ազդեցություն ունեցավ Սառը պատերազմը ներգաղթի վրա:
- Ինչպե՞ս էր ՀԽՍՀ ղեկավարությունը լուծում հայրենադարձների տեղավորման և ադապտացման հիմնախնդիրները:
- Ինպիսի՞ն էին նորեկների ու տեղացիների փոխհարաբերությունները:
- Ինչպե՞ս էին հայրենադարձները ընկալում խորհրդային իրականությունը:
- Ի՞նչ ներդրում ունեցան ներգաղթողները Խորհրդային Հայաստանի տնտեսության, մշակույթի, կրթության, խոհանոցի, կենցաղի զարգացման ասպարեզներում:

Հետազոտական աշխատանքների թեմաներ

- Սփյուռքահայերի մասնակցությունը Երկրորդ աշխարհամարտին:
- Հայ եկեղեցու մասնակցությունը հայրենադարձության գործընթացին:

- ՀՅԴ դիրքորոշումը ներգաղթի նկատմամբ:
- Ներգաղթը և ՀԲԸՄ դերակատարությունը:
- Հայրենադարձության հետևանքները Սփյուռքում:
- Հայրենադարձների բռնաճնշումները խորհրդային ժամանակաշրջանում:

ԹԵՄԱ III
1962-1988 ԹԹ. ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ[10]

1949 թ. դադարեց զանգվածային հայրենադարձությունը, սակայն իրականում սկսած 1950 թվականից առանձին թույլտվություններով ծավալվեց անհատական ներգաղթ: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ մեծ թվով սփյուռքահայեր նախապես վաճառած լինելով իրենց ողջ գույքը, չէին հասցրել տեղափոխվել Հայաստան: Հաջորդ կարևոր գործոնը կարող էր լինել ընտանիքների մասնատումը, երբ որոշ անդամները եկել էին՝ մյուսները մնացել արտերկրում ու այժմ ցանկանում էին վերամիավորվել իրենց հարազատների հետ (քանի որ ԽՍՀՄ-ը փակ երկիր էր՝ հաճախ արտասահմանում մնացած ազգականները տեղեկություն չունեին ներգաղթածների մասին և լինում էին դեպքեր, երբ ընտանիքի հետ միավորվելու համար հայրենադարձության դիմողի ազգականը այդ պահին գտնվում էր ոչ թե Հայաստանում, այլ՝ Սիբիրում): Եվ վերջապես պետք է հիշել, որ Սփյուռքի մի շարք համայնքներում հայերի շոշափելի հատվածներ ապրում էին ծանրագույն պայմաններում ու ցանկանում էին տեղափոխվել հայրենիք՝ ակնկալելով, որ այստեղ իրենց սպասում է ավելի բարվոք կացություն:

1958 թ. ստեղծվեց ՀԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման կառավարական հանձնաժողով: Վերջինս քննարկում էր հայրենիք վերադառնալ ցանկացողներից ստացված դիմումները և որոշում՝ տալ թույլտվություն կամ ոչ: Թույլտվություն ստացածների ներ-

[10] 1988 թ. արդեն խիստ նվազած ներգաղթը դադարեցնելու որոշում չկայացվեց, սակայն Սփյուռքի պատմության մի սկզբունքային նոր շրջան սկսվեց, որը զուգահեռվեց նաև վճռական փոփոխությամբ միգրացիոն ոլորտում:

գաղթը կազմակերպվում էր ԽՍՀՄ դեսպանությունների միջոցով: 1950-1961 թթ. հայրենադարձվեց մոտ 4000 հոգի:

Խոսելով 1950-1980-ական թթ. հայրենադարձության մասին՝ խիստ էական է նկատի առնել այն փոփոխությունները, որոնք տեղի էին ունենում Սփյուռքում: Եթե 1946-1949 թթ. հայրենադարձվողների հիմնական մղումը հայրենիք վերադառնալն էր, ապա այժմ շատ համայնքներում առաջացավ այնպիսի մթնոլորտ, որ հայերը անկախ ներգաղթի կարելիությունից որոշեցին լքել այդ երկրները և հարց էր առաջանում ո՞ւր գնալ: Հենց այդ ժամանակ հայրենադարձությունը դիտարկվում էր որպես հնարավոր, շատերի համար ցանկալի տարբերակ: Ի դեպ, 1962 թ. վերսկսված հայրենադարձության շրջանակներում Հայաստան էին գալիս նաև այն պարագայում, երբ նյութական միջոցները անբավարար էին ԱՄՆ կամ Կանադա մեկնելու, այնտեղ որոշ ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար: Այսինքն՝ կարող ենք ասել, որ հայրենադարձվում էր համեմատաբար ավելի չունևոր խավը, մինչդեռ մեծահարուստները հաճախ նախընտրում էին արևմտյան կապիտալիստական երկրները:

Դրությունը հատկապես ծանր էր Մերձավոր և Միջին Արևելքի ու Բալկանյան երկրներում: Դրանցից շատերում տեղի ունեցող քաղաքական վայրիվերումները, հեղափոխություններն ու հեղաշրջումները, քաղաքացիական պատերազմները, ծայրահեղականության աճը, որոշ դեպքերում փոքրամասնությունների նկատմամբ ճնշումները, գույքի ազգայնացումը անկիայտ էին դարձնում, որ այս պետություններում հայկական համայնքների ճակատագիրը անորոշ է: Այսպես միգրացիոն մեծ ալիքներ ծավալվեցին 1940-ական թթ. վերջում Պաղեստինից, 1950-ական թթ. Ռումինիայից, Հունաստանից, Հորդանանից: 1950-ական թթ. վերջում ու 1960-ական թթ. սկզբում զանգվածային արտա-

գաղթ տեղի ունեցավ Եգիպտոսից, Սիրիայից: Սա հանգեցնում էր ծաղկուն հայկական համայնքների թուլացմանը: Հենց այն երկրները, որտեղ հայապահպանության լայն հնարավորություններ կային կորցնում էին մեծ թվով հայություն:

Խորհրդային Հայաստանի իշխանությունները բավարար արագությամբ չէին արձագանքում տեղի ունեցող այս զարգացումներին, ինչի հետևանքով անհամեմատ ավելի շատ հայեր 1950-1980-ական թթ. գաղթեցին Սփյուռքի մի համայնքից մյուսը (հատկապես Մերձավոր Արևելքից արևմտյան երկրներ), քան հայրենադարձվեցին: Այնուամենայնիվ, սփյուռքահայերի հայրենադարձվելու բուռն ցանկությունը մղում էր ՀԽՍՀ իշխանություններին ձեռնարկելու գործնական քայլեր: Այս հարցը բարձրացրեցին 1961 թ. Հայաստանի խորհրդայնացման 40-ամյակի տոնակատարություններին մասնակցելու եկած մի շարք սփյուռքահայ գործիչներ:

1961 թ. օգոստոսի 12-ին ԽՄԿԿ կենտկոմն ու ԽՍՀՄ մինիստրների խորհուրդը, ընդառաջելով ՀԽՍՀ կառավարության ու սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին, որոշում ընդունեցին Մերձավոր ու Միջին Արևելքի և ամերիկյան երկրներից հայերի նոր զանգվածային հայրենադարձություն կատարելու մասին: Նախատեսվում էր 1962-1965 թթ. հայրենիք վերադարձնել ավելի քան 40 հազար հոգու: Այդ աշխատանքները կազմակերպելու համար ՀԽՍՀ մինիստրների խորհրդին առընթեր ստեղծվեց արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտե: Նորից ընդունման կայաններ բացվեցին Բաթումում, ինչպես նաև Ջուլֆայում ու Բաքվում (իրանահայերի համար):

1962 թ. հոկտեմբերի 7-ին Բաթում հասավ հայրենադարձների առաջին խումբը Կիպրոսից: Ընդհանուր առմամբ այդ տարի

վերադարձավ 757 մարդ: Կիպրահայ հայրենադարձները տեղավորվեցին Լենինականում և Կիրովականում, իսկ եգիպտահայերը՝ Երևան, Լենինական, Կիրովական ու Ալավերդի քաղաքներում: 1963 թ. հայրենադարձվեց 2304 մարդ, որից 1732-ը Իրանից: Նույն թվականին, քննարկելով գործընթացը, ՀԽՍՀ մինիստրների խորհուրդը նշեց, որ տեղ են գտել մի շարք թերություններ հայրենադարձների տեղավորման աշխատանքներում: Ի տարբերություն Մեծ հայրենադարձության՝ Խորհրդային Միությունում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում հնարավոր էր դարձել (թեկուզ խիստ չափավոր) կառավարության աշխատանքների ինքնաքննադատությունը: Իհարկե, այլոց կողմից սխալների մատնանշումն ընկալվում էր թշնամաբար:

1964 թ. հայրենադարձվեց ընդամենը 1088 մարդ (որից 836-ը՝ Սիրիայից), իսկ 1965 թ.՝ 2700 (2468-ը՝ Սիրիայից): Կարևոր էր 1965 թ. ՀԽՍՀ մինիստրների խորհրդի որոշումը, որի համաձայն պետք է լուծվեին ոչ միայն վերջին տարիներին, այլև 1946-1962 թթ. ներգաղթածների դեռևս առկա բնակարանային խնդիրները:

1965 թ. ավարտվում էր 1961 թ. կայացված որոշման ժամկետը, սակայն ներգաղթել էր ակնկալվածից ավելի քան հինգ անգամ պակաս մարդ: Ուստի անհրաժեշտ էր երկարաձգել զանգվածային հայրենադարձության ժամկետը: Համապատասխան որոշումը կայացվեց 1966 թ.: Նախատեսվում էր տարեկան հայրենադարձել 1000 հոգու: Սակայն այս անգամ էլ ծրագրվածը խախտվեց հակառակ իմաստով՝ մյուս տարիներին եկավ շատ ավելի մարդ՝ բացի 1967 թվականից: Ընդհանրապես, 1962-1988 թթ. հայրենադարձության բարձրակետը եղավ 1969 թվականը՝ երբ հայրենադարձվեց 4516 հոգի: Եթե 1966 թ. ներգաղթածների մեծամասնությունը Սիրիայից էր, ապա դրանից հետո խիստ գերակշռող դարձան իրանահայերը:

1970 թ. որոշվեց հայրենադարձությունը շարունակել ոչ մեծ խմբերով ու անհատական կարգով: Աստիճանաբար տարեկան հայրենադարձվողների թիվը նվազեց՝ 1970-ական թթ. վերջում 1980-ական թթ. սկզբում տարեկան ներգաղթում էր ընդամենը մի քանի հարյուր հոգի: Քանի որ հետազոտված են մինչև 1982 թ. հայրենադարձության նյութերը՝ կարելի է հստակ խոսել 1962-1982 թթ. ներգաղթի արդյունքների մասին: Այսպես, վերոնշյալ ժամանակաընթացքում հայրենադարձվեց 31.920 հոգի, որից 24.283-ը՝ Իրանից, 4848-ը՝ Սիրիայից, 727-ը՝ Եգիպտոսից, 547-ը՝ Թուրքիայից, 505-ը՝ Կիպրոսից, 378-ը՝ Լիբանանից, 291-ը՝ Իրաքից, 71-ը՝ Ֆրանսիայից, 53-ը՝ Հունաստանից, 50-ը՝ ԱՄՆ-ից, 49-ը՝ Արգենտինայից, 25-ը՝ Իսրայելից: Այլ երկրներից հայրենադարձվածների թիվը չէր գերազանցում երկու տասնյակը:

Հետաքրքրական է նաև այս քսանամյակի ընթացքում հայրենադարձվածների տեղաբաշխման պատկերը: Նրանցից 5935-ը հաստատվեց Լենինականում, 4729-ը՝ Կիրովականում, 3775-ը՝ Հրազդանում, 3720-ը՝ Աբովյանում, 2828-ը՝ Չարենցավանում, 1224-ը՝ Էջմիածնում, 1004-ը՝ Մասիսում, 807-ը՝ Երևանում: Մասնագիտական տեսանկյունից մեծ թիվ էին կազմում արհեստավորները, շինարարները, հողագործները (հիմնականում Սիրիայի Ղամշլիի շրջանից ու Իրանից), ինչպես նաև առևտրի, տրանսպորտի ու արդյունաբերության ոլորտներում աշխատողները: Ի դեպ, տեղաբաշխումն իրականացնելիս հատուկ ծրագրվել էր մեծ թվով ներգաղթողների բնակեցնել նոր զարգացող արդյունաբերական քաղաքներում:

Քանի որ 1960-1980–ական թթ. հայրենադարձների մեծամասնությունը իրանահայեր էին՝ տեղացիները նրանց հաճախ սկսեցին կոչել «պարսիկ»: Նույնիսկ շատերը կարծում էին թե նորեկները մուսուլմաններ են: Սա ևս մեկ անգամ վկայում է, որ

նախորդ ժամանակշրջանից բավարար դասեր չէին քաղվել և չէին կատարվել անհրաժեշտ աշխատանքներ հանրապետության բնակչությանը ծանոթացնելու Սփյուռքի իրողություններին:

Ի տարբերություն 1946-1949 թթ. հայրենադարձության՝ այժմ սփյուռքահայերը ավելի լավ էին պատկերացնում թե ուր են գնալու, քանի որ ԽՍՀՄ-ի մասին համեմատաբար ավելի շատ բան էր հայտնի: 1964 թ. Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի ստեղծումից հետո զգալիորեն ակտիվացել էին շփումները: Շատ երիտասարդներ գալիս էին սովորելու Խորհրդային Հայաստանի բուհերում, Սփյուռքի դպրոցների ուսուցիչները վերապատրաստման ծրագրերի էին մասնակցում, Հայաստանում ազգականներ ունեցողներին հաճախ թույլատրում էին այցելել հայրենիք: Մի խոսքով, առկա էին շփումներ ու իրական պատկերացումներ այն երկրի մասին ուր պետք է հաստատվեին հայրենադարձները:

Բացի այդ, եթե համեմատենք 1940-ական թթ. կեսերի ու դրանից երկու տասնամյակ անց իրավիճակը ՀԽՍՀ-ում, ապա վերջինս զգալիորեն զարգացել էր թե՛ տնտեսության, թե՛ այլ բնագավառներում ու ավելի պատրաստ էր ընդունելու արտասահմանի հայրենակիցներին: 1962 թ. սկսված հայրենադարձության ժամանակ մասամբ հաշվի առնվեցին այն սխալները, որոնք առկա էին նախորդ փուլում: Կարևոր էր, որ ամեն տարի ընդունվում էր առավելագույնը մի քանի հազար հոգի՝ ինչը հնարավորություն էր տալիս ավելի արդյունավետ լուծել նրանց տեղավորման, աշխատանքի ապահովման ու այլ խնդիրները: Խիստ հատկանշական է, որ եթե Մեծ հայրենադարձության ժամանակ բազմաթիվ հայեր ցանկանում էին տեղափոխվել հայրենիք նաև Արևմտյան երկրներից (ԱՄՆ, Ֆրանսիա), ապա

1960-ական թթ. գլխավորապես թիրախում Մերձավոր Արևելքի համայնքներն էին:

Ի՞նչ դիրքորոշում որդեգրեցին հայկական կուսակցությունները: Հնչակյաններն ու ռամկավարները, բնականաբար, ողջունում էին հայրենադարձության գաղափարը, իրենց թերթերով քարոզում ներգաղթի այլընտրանք չունենալը: Սակայն այս կուսակցությունների անդամներն էլ շատ ավելի առարկայական պատկերացումներ ունենալով Խորհրդային Հայաստանի մասին, քան 1940-ական թթ., հաճախ մնում էին քարոզողների դերում՝ խուսափելով իրենք ևս տեղափոխվել հայրենիք: ՀՅԴ միանշանակ չէր հանդես գալիս հայրենադարձության դեմ, նույնիսկ երբեմն քաջալերում էր այն, սակայն ՀՅԴ-ական մամուլը ջանում էր սփյուռքահայերին ի ցույց դնել բոլոր այն բացասական երևույթները, որոնք նրանց սպասելու են հայրենիքում: Կրկին դրվում էր «ներքին սփյուռքի»[11] հարցը՝ նշելով, որ խորհրդային այլ հանրապետություններում հայերը շատ ավելի արագ են ուծանում, քան Մերձավոր Արևելքի երկրներում, որտեղից էլ ծավալվում էր ներգաղթը: Սակայն իրականում, հատկապես մինչև 1970-ական թթ., ՀՅԴ-ն աջակցում էր որոշ երկրներից արտագաղթին՝ ուղղված ԱՄՆ, Կանադա և այլ երկրներ՝ դրանով փաստորեն գործելով հայրենադարձության տրամաբանության դեմ (չնայած հանուն արդարության պետք է նշել, որ հաճախ տվյալ համայնքնե-

[11] Ի դեպ, այս տարիներին միութենական այլ հանրապետություններից (հատկապես Ադրբեջանական ու Վրացական ԽՍՀ-ներից) կամավոր հիմունքներով, ոչ ՀԽՍՀ իշխանությունների նախաձեռնությամբ, զգալի թվով հայեր տեղափոխվեցին Խորհրդային Հայաստան: Սակայն տեղի ունեցածը միշտ չէ, որ կարելի է բնորոշել որպես հայրենադարձություն, քանզի քիչ չէին նաև Արցախից, Նախիջևանից ու Ջավախքից ՀԽՍՀ եկողները: Նույն ժամանակաընթացքում տեղի է ունեցել նաև Հայաստանից արտագաղթ ԽՍՀՄ այլ հանրապետություններ՝ հատկապես ՌՍԴԽՀ: Ցավոք, միգրացիոն այս տեղաշարժերի վերաբերյալ թվական տվյալներ չկան:

րից նույն ժամանակաշրջանում ներգաղթ չէր կազմակերպվում կամ կազմակերպվում էր շատ սահմանափակ թվով):

1980-ական թթ. կեսերին հայրենադարձության ծավալները խիստ նվազել էին, իսկ 1988 թ., կապված Արցախյան շարժման ու դրան զուգահեռ իրադարձություններով, պատկերը միանգամայն փոխվեց. տեղի ունեցավ ադրբեջանահայության զանգվածային բռնի տեղափոխում Հայաստան, միաժամանակ ծայր առավ հսկայածավալ արտագաղթ, որին նպաստում էր ԽՍՀՄ փլուզման գործընթացը, 1988 թ. դեկտեմբերյան երկրաշարժը, Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից շրջափակումը, պատերազմը, տնտեսության կազմաքանդումը և մի շարք այլ գործոններ:

Սակայն իրականում Խորհրդային Հայաստանից արտագաղթը չէր սկսվել 1980-ական թթ. վերջում: Մեծ հայրենադարձության ժամանակ եկածներից շատերը, ինչպես արդեն նշվել է, ցանկանում էին հեռանալ դեռևս վերադառնալու հաջորդ ամիսներին՝ ինչի համար փորձում էին անօրինական կերպով հատել Թուրքիայի հետ սահմանը: Ի. Ստալինի մահից հետո տեղի ունեցող փոփոխությունները հույս էին ներշնչում, որ կարող է լինել արտագաղթի օրինական ճանապարհ:

1956 թ. Հայաստան այցելեց Ֆրանսիայի ԱԳ նախարար Ք. Պինոն ում օդանավակայանում դիմավորեցին մի խումբ ֆրանսահայեր, որոնք աղաչում էին օգնել վերադառանալ Ֆրանսիա: Նույն թվականին մի խումբ հայրենադարձ ամերիկահայեր նամակ հղեցին ԱՄՆ նախագահ Դ. Էյզենհաուերին՝ համանման խնդրանքով: Չնայած ուղղակի կապ դժվար է տեսնել, սակայն թերևս պատահական չէ, որ երկու իրադարձություններն էլ տեղի ունեցան ԽՄԿԿ նշանավոր 20-րդ համագումարից մի քանի ամիս անց: Արդեն 1975 թ. ԽՍՀՄ-ը ստորագրեց Հելսինկյան եզրափակիչ ակտը, որով մարդու իրավունքների համատեքստում պարտավորվում էր թույլ տալ ընտանիքների վերամիավորումը:

Սա շատ կարևոր նշանակություն ուներ Խորհրդային Հայաստանից արտագաղթի համատեքստում:

1950-ական թթ. արտագաղթի մասնավոր դեպքերին մյուս տասնամյակում հաջորդեց արտասահմանում բարեկամներ ունեցողների աստիճանական արտահոսքը, որը շատ ավելի մեծացավ 1970-1980-ական թթ.: Պարտադիր էր արտերկրից բարեկամի հրավերը: Երբ մի ներգաղթողի հարցնում են, թե արդյո՞ք ԱՄՆ-ում բարեկամ ունի, որ ուզում է գաղթել՝ նա պատասխանում է. «*Է, 49-ին աքսորվեցա նե, Սիբերիա բարեկա՞մ ունեի*»:

Նշելի է, որ արտագաղթելու ցանկություն հատկապես ուներ հայրենադարձված միջին և տարեց սերունդը, մինչդեռ մանուկ հասակում եկածները կամ առավել ևս ներգաղթածների Հայաստանում ծնված երեխաները հիմնականում համարկվել էին տեղական միջավայրին և չէին ցանկանում լքել հայրենիքը:

1970-ական թթ. մեծապես բարձրացավ հայրենադարձների վարկանիշը: Արտագաղթելու ցանկություն ունեին նաև բազմաթիվ տեղացի հայեր, որոնց ելքն արգելված էր: Ուստի շատերը ձգտում էին ամուսնանալ ներգաղթածի հետ, որպեսզի լքեն հայրենիքը: Երբեմն այդպիսի ամուսնությունները կարող էին լինել «ձևական»: Այնուհետև ԱՄՆ տեղափոխվածը սկսում էր հրավիրել իր հարազատներին:

Հայրենադարձների շատ փոքր մասն էր եկել ԱՄՆ-ից, բայց արտագաղթողների մեծամասնությունը մեկնում էր հենց այս երկիր: Դրա պատճառներից էր նաև այն, որ Մերձավոր Արևելքի երկրներից իրենց հարազատներից շատերն արդեն հաստատվել էին Միացյալ Նահանգներում և այժմ այնտեղից ուղարկում էին հրավերներ: Ֆրանսահայերի զգալի մասը վերադարձավ Ֆրանսիա: Իհարկե կային նաև Լիբանան մեկնողներ, սակայն նրանցից շատերն էլ հետագայում տեղափոխվում էին ԱՄՆ: Արտա-

գաղթողներին հաճախ օգնություն էր ցուցաբերում ԱՆՉԱ[12] կազմակերպությունը: Չնայած չկան թվական հստակ տվյալներ, սակայն կարելի է նշել, որ 1962-1988 թթ. արտագաղթել են մի քանի տասնյակ հազար հայեր:

Միանշանակ չէր նախկին հայրենադարձների ընդունելությունը ԱՄՆ հայ համայնքի կողմից: Շատերն էին մեղադրում նրանց հայրենիքը լքելու մեջ: Ուստի որոշ իմաստով նախկին հայրենադարձները ոչ բարյացակամ վերաբերմունքի էին արժանանում արդեն երկրորդ անգամ:

Այսպիսով, 1962-1988 թթ. հայրենադարձվեց ավելի քան 30 հազար հոգի: Չնայած ներգաղթողների թիվը կազմեց Մեծ հայրենադարձության մոտ 1/3-ը, սակայն ավելի լավ էր կազմակերպված: Աստիճանաբար ադապտացվելով Հայաստանի իրականությանը՝ նորեկները իրենց լուման ներդրեցին հայրենիքի շենացման գործում: Միաժամանակ ՀԽՍՀ-ն լքելու հնարավորության պայմաններում հենց այս շրջանում արտագաղթեցին թերևս նույնքան հայրենադարձներ, ովքեր չէին կարողացել համակերպվել խորհրդային իրականության բացասական երևույթներին:

1988 թ. սկսված Արցախյան շարժումն ու հետագա իրադարձությունները բերեցին մի շարք նոր մարտահրավերներ: Ծայր առավ զանգվածային արտագաղթ: Չնայած դրան անկախության տարիներին էլ նկատվեցին հայրենադարձության թե՛ անհատական, թե՛ զանգվածային ալիքներ: Երկրորդի պարագայում, սակայն դրանք ոչ թե կազմակերպված էին պետության կողմից, այլ պայմանավորված էին մի քանի երկրներում ստեղծված ծանրագույն պայմաններով: Առաջին հսկայական խումբը Ադրբեջանի հայերն էին, որոնց զգալի մասը, սակայն հետագայում արտա-

[12] ԱՆՉԱ (ANCHA, American National Committee to Aid Homeless Armenians) – Հայրենազուրկ հայերի օգնության ամերիկյան ազգային կոմիտե:

գաղթեց Ռուսաստան, ավելի փոքր թվով՝ Ուկրաինա, ԱՄՆ և այլ երկրներ: Արդեն XXI դարի սկզբում Հայաստան տեղափոխվեցին իրաքահայեր, իսկ 2011 թ. սիրիական ճգնաժամով պայմանավորված՝ ավելի քան 20 հազար սիրիահայեր: Ցավոք, պետական համակարգված քաղաքականություն, որը կխրախուսեր նրանց հաստատումը հայրենիքում կրկին չիրականացվեց: Դրա պատճառով բազմաթիվ հայրենադարձներ լքեցին Հայաստանը՝ տեղափոխվելով ամերիկյան ու եվրոպական երկրներ:

Հարցադրումների քննարկում թեմայի շրջանակներում

- Որո՞նք էին 1960-ական թթ. զանգվածային հայրենադարձության կազմակերպման պատճառները:
- Սփյուռքում տեղի ունեցող փոփոխությունները ինչպե՞ս էին ազդում ներգաղթի քաղաքականության վրա:
- Ո՞ր երկրներում էր առկա հայրենադարձության պահանջարկ:
- Ինչպիսի՞ սկզբունքային տարբերություններ են առկա 1946-1949 թթ. և 1960-1980-ական թթ. հայրենադարձության գործընթացներում:
- Որո՞նք էին Խորհրդային Հայաստանից հայրենադարձների արտագաղթի հիմնական պատճառները:

Հետազոտական աշխատանքների թեմաներ

- 1946-1949 թթ. և 1960-1980-ական թթ. հայրենադարձության համեմատական վերլուծություն:
- 1960-1980-ական թթ. ներգաղթի աշխարհագրությունը:
- Սփյուռքահայ կառույցների դիրքորոշումը հայրենադարձության նկատմամբ:
- Իրանահայերի հայրենադարձությունը 1960-1980-ական թթ.:

ԹԵՄԱ IV
ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայկական սփյուռքի դիտարկման համար աշխարհացրիվ համայնքները կարելի է խմբավորել չորս խոշոր տարածաշրջաններում: Ակնհայտ է, որ չնայած դրանք հիմնախնդիրների առումով ունեն ընդհանրություններ, սակայն միաժամանակ բազմաթիվ տարբերություններ (օրինակ՝ քաղաքակրթական, քաղաքական, մշակութային միջավայրերի և այլն): Բազմաթիվ հանգամանքներով պայմանավորված՝ տարբեր տարածաշրջաններում հայկական համայնքների զարգացումները ընթանում են այլազան ճանապարհներով՝ սկսած դրանց կազմալուծումից, մինչև ստվարացում: Մեկ տարածաշրջանի մեջ մտնում են բազմաթիվ պետություններ, ուստի կշեշտենք այն հիմնահարցերը, որոնք քիչ թե շատ բնորոշ են դրանում ընդգրկված բոլոր համայնքներին:

1. Միջին Արևելք

Միջին Արևելքի առանձնահատկություններից է այն, որ ի տարբերություն այլ տարածաշրջանների, այստեղ վերջին 70-80 տարիներին միջպետական, քաղաքական, տնտեսական, միջկրոնական, միջդավանական և ազգամիջյան հողի վրա տեղի են ունենում ռազմական թեժ հակամարտություններ, քաղաքացիական պատերազմներ, հեղաշրջումներ, արմատականության դրսևորումներ: Դրանք չեն շրջանցում հայկական համայնքները, հետևաբար անհատական և հավաքական առումով սպառնում են նրանց ֆիզիկական անվտանգությանը:

Վերը թվարկած սպառնալիքների կողքին կան նաև այլ, միաժամանակ նախորդների հետ որոշ չափով փոխկապակցված

գործոններ՝ կրոնական անհանդուրժողականությունը քրիստոնյաների նկատմամբ (Թուրքիա, Սիրիա[13] և այլն), հայատյացությունը (Թուրքիա), ինչպես նաև որոշ դեպքերում սոցիալ-տնտեսական ծանր պայմաններն ու քաղաքակրթական միջավայրը, որոնք բոլորն էլ ուղղակի հետևանքներ են ունենում հայկական համայնքների զարգացման վրա: Ռազմաքաղաքական տեսանկյունից Միջին Արևելքը մնում է ամենաանկայուն և անկանխատեսելի շրջադարձներով լի տարածաշրջանը:

Թուրքիա – 60 հազ.[14]	Իրաք – 8 հազ.
Լիբանան – 50 հազ.	Հորդանան – 5 հազ.
Իրան – 50 հազ.	Քուվեյթ – 4 հազ.
Սիրիա – 10-12 հազ.[15]	Եգիպտոս – 3 հազ.
Իսրայել – 10 հազ.	Կիպրոս – 2 հազ.

2. Հետխորհրդային երկրներ

Հետխորհրդային տարածաշրջանն առանձնանում է այն հանգամանքով, որ չնայած որոշ երկրներում հայ համայնքների բազմադարյա պատմությանը՝ այստեղի համայնքները նոր են ձևավորվում: Խորհրդային շրջանում էլ այստեղ առկա է եղել զգալի թվով հայություն, սակայն համայնքային գործունեություն դրանք գրեթե չեն ծավալել:

---

[13] Խոսքը վերաբերում է 2011 թ. սկսված պատերազմի ժամանակ ահաբեկչական խմբավորումների վերահսկողության ներքո հայտնված հատվածներին:

[14] Թուրքիայում բնակվում են նաև մի քանի տասնյակ հազար հայաստանցիներ (վերջին տարիներին ՀՀ-ից տեղափոխված): Էլ ավելի դժվար է հաշվարկել ծպտյալ, իսլամացված հայերին ու նշել հստակ թվեր:

[15] Մինչև 2011 թ. Սիրիական պատերազմը տեղի հայերի թիվը մոտ 50 հազար էր: Ներկայումս վիճակագրական տվյալների բացակայության պայմաններում ավելի դժվար է հստակորեն պատկերացնել սիրիահայ համայնքի թվաքանակը: Մոտ 20 հազար սիրիահայեր հայրենադարձվեցին (չնայած հետագայում նրանց մի մասը լքեց Հայաստանը), հազարավորներն էլ գաղթեցին Լիբանան, Կանադա, Նիդերլանդներ, Ավստրալիա և այլուր:

Տարածաշրջանի բացառիկությունը նրանում է, որ բոլոր երկրները գտնվել են նույն պետության մեջ, ուստի ունեն բազմաթիվ ընդհանրություններ կյանքի տարբեր ոլորտներում: Կապված նոր-նոր համայնքային կառույցների ձևավորման և ինտեգրման զգալի դյուրություններով (թեկուզ լեզվական)՝ այս տարածաշրջանում հայության ծուլումը հաճախ ընթանում է խիստ արագ:

Ռուսաստան – 2,5 մլն. Ուզբեկստան – 70 հազ.
Վրաստան – 220 հազ. Բելառուս – 30 հազ.
Ուկրաինա – 140 հազ. Ղազախստան – 25 հազ.
Թուրքմենստան – 20 հազ.

3. Ամերիկա աշխարհամաս

Ամերիկյան տարածաշրջանն աչքի է ընկնում հայկական համայնքների զանազանությամբ: ԱՄՆ-ն և Կանադան շարունակաբար համալրվում են այստեղ գաղթող հայերով, ինչը նպաստում է տեղի համայնքների ներուժի պահպանմանը: Միաժամանակ, ուծացման գործընթացը ծավալվում է բավականին արագ: Այս տարածաշրջանի պետություններն աչքի են ընկնում տնտեսական մեծ հնարավորություններով և բարեկեցության խոշոր ակնկալիքներ են առաջացնում աշխարհի այլ հատվածներում բնակվողների՝ այդ թվում հայերի շրջանում, ինչն էլ խրախուսում է նրանց ներգաղթը:

Լատինական Ամերիկայի հայաշատ երկրներում վերջին շրջանում սոցիալ-տնտեսական, քաղաքական համեմատական կայունացումը (բացառությամբ Վենեսուելայի) ու այլ դրական տեղաշարժերը հնարավորություն են տալիս հայկական համայնքներին խուսափել տարերային ու անկանխատեսելի իրավիճակներից: Միևնույն ժամանակ դրանք բավականին մեկուսացած են հայաշատ այլ կենտրոններից հեռու լինելու պատճառով:

Ամերիկյան տարածաշրջանի հետ որոշակի նմանություններ ունի Ավստրալիան, որտեղ հայերի մեծ ներհոսք տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած մի քանի տասնամյակների ընթացքում:

ԱՄՆ – 1,2 մլն.
Արգենտինա – 70 հազ.
Կանադա – 65 հազ.
Բրազիլիա – 35 հազ.
Ուրուգվայ – 15 հազ.
Վենեսուելա–3,5 հազ.

***

Ավստրալիա – 40 հազ.

4. Եվրոպա

Եվրոպական երկրների մեծամասնությունում առկա են փոքր կամ մեծ հայկական համայնքներ: Այստեղ ևս զգալի վտանգ է ուծացման արագ ընթացքը: Տարածաշրջանին բնորոշ ժողովրդավարությունն ու մարդու իրավունքների պաշտպանվածությունը ևս որոշ չափով նպաստում են այստեղ հայերի ներհոսքին:

Քաղաքական առումով պայմանները նպաստավոր են: Ընձեռված ազատությունները լայն գործունեության հնարավորություն են տալիս հայկական համայնքային կառույցներին: Սակայն հայության բավական ցրված լինելը, պետական համակարգերում ազգային համայնքների ոչ մեծ դերը, անհատական համարկման հնարավորությունները դժվարեցնում են հայության հոծ խմբերի համայնքային կյանքում ներգրավմանը:

Ֆրանսիա – 450 հազ.[16]
Գերմանիա – 50 հազ.
Հունաստան – 45 հազ.
Բուլղարիա –15 հազ.
Շվեդիա – 12 հազ.
Չեխիա – 10 հազ.

[16] Ինչպես շատ այլ երկրների պարագայում՝ եվրոպական պետությունների հայերի թվաքանակը խիստ մոտավոր է և հիմնված է ոչ թե պետական մարդահամարների այլ փորձագիտական գնահատականների, ՀՀ դեսպանությունների կամ թեմերի առաջնորդների հաղորդած տվյալների վրա:

Լեհաստան – 40 հազ.	Հունգարիա – 6 հազ.
Իսպանիա – 35 հազ.	Ավստրիա – 6 հազ.
Բելգիա – 25 հազ.	Շվեյցարիա –3 հա.
Նիդերլանդներ – 25 հազ.	Իտալիա – 3 հազ.
Մեծ Բրիտանիա –23 հազ.	Ռումինիա – 2 հազ.

ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

- **Տնտեսական դրությունը**

Աշխարհի տարբեր տարածաշրջաններում սփյուռքահայ համայնքներն ունեն էական սոցիալ-տնտեսական առանձնահատկություններ: Դրա վրա ազդող հանգամանքներն են ինչպես տվյալ երկրների ընդհանուր կացությունը, այնպես էլ դրանցում առկա պայմաններն ազգային փոքրամասնությունների տնտեսական գործունեության ծավալման համար:

XX դ. պատմությունը ցույց է տվել, որ հատկապես Մերձավոր Արևելքի ստվարածավալ համայնքներ ունեցող երկրներում (Լիբանան, Սիրիա), հայերը կարողացել են տնտեսության առանձին ոլորտներում ձեռք բերել առաջատար դիրքեր: Այս երկրներում գործել և մասամբ շարունակում են գործել մի շարք գործատեղիներ, որոնց անձնակազմը գրեթե ամբողջությամբ բաղկացած է հայերից:

Ի տարբերություն սրա՝ եվրոպական և հյուսիսամերիկյան երկրներում հայերը, ընդհանուր առմամբ, քիչ գործոններով կապված լինելով հայկական համայնքներին, շատ ավելի համարկված են այդ պետությունների տնտեսություններին որպես անհատներ: Մոտավորապես նույն պատկերն է տիրում Լատինական Ամերիկայում:

Հետխորհրդային երկրներում տնտեսական փոխգործակցության մեջ, մասամբ առկա հայրենակցական գործոնը գալիս է հաստատելու Սփյուռքի ընդհանուր օրինաչափությունները: Սկզբնական շրջանում որևէ երկրում հաստատվելով՝ հայերն առավելաբար փորձում էին տնտեսական գործունեություն ծավալել իրենց համերկրացիների հետ: Այսօր էլ հաճախ նոր արտագաղթած հայերը փորձում են իրենց հայրենակիցների՝ հաճախ ավելի նեղ իմաստով իրենց համերկրացիների (նույն մարզ, քաղաք, գյուղ) հետ սկսել տնտեսական գործունեության ծավալումը: Սակայն, որպես կանոն, հետագայում, ինտեգրվելով ընդունող հասարակությանը, նորեկները խորացնում են կապերը տեղի շրջանակների հետ և շարունակում ազգակիցների հետ տնտեսական փոխգործակցությունը միայն նյութական շահերի համընկնման պարագայում: Հայերն արտասահմանյան գրեթե բոլոր երկրներում տոկոսային առումով զբաղեցնում են բավականին փոքր թվաքանակ, ուստի աստիճանաբար նրանց փոխգործակցությունը նվազում է:

Քանի որ արևմտյան երկրները, ինչպես և ՌԴ-ն, տնտեսապես ավելի մեծ հնարավորություններ են ընձեռում և այնտեղ առկա է համեմատական կայունություն՝ առանձին հայ անհատների հաջողվել է ձևավորել շոշափելի դրամագլուխ: Այդ հանգամանքներով պայմանավորված, տնտեսական գործունեությամբ զբաղվելու լայն հնարավորություններն այստեղ ավելի մեծ են, ինչը մղում է հայերին ծավալել ակտիվ գործարար աշխատանքներ տարբեր ոլորտներում:

- **Սոցիալական դրությունը**

Ընդհանուր առմամբ հայերը համեմատաբար բարձր սոցիալական դիրքեր են զբաղեցնում այն երկրներում, որտեղ վաղուց

են հաստատված լինում: Այդ առումով, իհարկե, ավելի շահեկան դիրքում են գտնվում սփյուռքահայ երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ սերունդները: Հետևաբար, որպես սոցիալական կառուցվածքով բաղդատաբար կայուն տարածաշրջան առանձնանում է Լատինական Ամերիկան, որտեղ վերջին կես դարի ընթացքում անհամեմատ ավելի քիչ թվով հայեր են մեկնել: Մինչդեռ, օրինակ Հյուսիսային Ամերիկայում, Սփյուռքում հաստատվածների մի շարք տարբեր սերունդների առկայությունը դժվարացնում է ընդհանուր պատկերի ուրվագծումը: XX դ. սկզբում ԱՄՆ-ում հաստատվածների ներկայիս ժառանգներն անհամեմատ ավելի խորը համարկված լինելով տեղի հասարակությանը, քան օրինակ մի քանի տարի առաջ Հայաստանից արտագաղթածները, որպես կանոն, ավելի հաստատուն դիրքեր են զբաղեցնում նաև տնտեսության մեջ:

Հետխորհրդային տարածաշրջանն այդ առումով առանձնանում է նորահաստատ հայերի մեծ քանակությամբ, որոնք նորնոր են փորձում բարձրանալ հասարակության սոցիալական աստիճաններով: Մերձավոր Արևելքի համայնքները որոշ նմանություններ ունեն Լատինական Ամերիկայի երկրներին այն առումով, որ համեմատաբար փոքր թվով հայեր են այստեղ հաստատվել վերջին տասնամյակներում, և քիչ են Սփյուռքում հայտնված առաջին սերնդի ներկայացուցիչները: Սակայն առաջինները տարբերվում են համայնքային կառույցների զարգացվածությամբ և պետության կողմից հայությանը որպես համայնք ընկալելու առումով, որը, անշուշտ, որոշ չափով ազդում է նրանց սոցիալական դրության վրա:

- **Ժողովրդագրական դրությունը**

Ժողովրդագրական առումով տարածաշրջանային բաժանումը կարելի է կատարել հետևյալ կերպ: Մերձավոր Արևելքի հայ

համայնքներն առանձնանում են անընդհատ արտագաղթով և հայության նվազմամբ: Դրան սկզբունքորեն հակառակ է հետ-խորհրդային տարածաշրջանը, որտեղ հայերի թիվը անվերջա-նալիորեն աճում է:

Եվրոպական ու հյուսիսամերիկյան երկրները ևս շարունա-կում են համալրվել ինչպես Հայաստանից, այնպես էլ Մերձավոր Արևելքի երկրներից գաղթողներով: Լատինական Ամերիկան առանձնանում է ժողովրդագրական տեղաշարժերի խիստ պաս-սիվությամբ և կայունությամբ:

Այսպիսով, Մերձավոր Արևելքի հայկական համայնքներն արտագաղթի հետևանքով աստիճանաբար թուլանում են, իսկ ԱՄՆ-ի, Կանադայի, եվրոպական երկրների մի մասի և Ավստ-ռալիայի հայկական համայնքները մեծանում են դրա հաշվին:

Հետխորհրդային տարածաշրջանի հայկական համայնք-ներն, ի տարբերություն վերոնշյալի, գերազնացապես համալր-վում են Հայաստանից արտագաղթի հաշվին, որը նաև կարևոր-ագույն աղբյուր է հյուսիսամերիկյան և եվրոպական երկրների հայկական համայնքների ստվարացման համար:

- **Հակամարտությունները և ծայրահեղականությունը**

Աշխարհում տեղի ունեցող հակամարտությունները իրենց հսկայական բացասական նշանակությունն են ունենում սփյուռ-քահայ համայնքների զարգացման համար: Դիտարկելով հակա-մարտությունների և ծայրահեղականության գործոնը՝ հարկ է նշել, որ Միջին Արևելքը փխրուն տարածաշրջան է, և շատ դեպ-քերում հնարավոր են անկանխատեսելի զարգացումներ:

Հատկապես Երկրորդ աշխարհամարտից հետո սկսված իրարահաջորդ գործընթացները Մերձավոր Արևելքում ծանր հարված հասցրեցին սփյուռքահայ համայնքներին: Քանի որ

ստվարածավալ հայկական համայնքներ ունեցող պետություններից հատկապես այս տարածաշրջանում են վերջին տասնամյակների ընթացքում տեղի ունեցել մեծ թվով հակամարտություններ, համառոտակի անդրադառնանք դրանց:

Իսրայել պետության ստեղծումը և դրան հաջորդող իսրայել-արաբական պատերազմները մեծ հարված էին ինչպես հենց Պաղեստինի հայերին, այնպես էլ հարևան արաբական երկրներում բնակվողներին: Հետագայում՝ 1950-ական թթ. Եգիպտոսում, ապա նաև Սիրիայում ներքաղաքական կյանքում մեծապես աճեց ծայրահեղականությունը: Սա, զուգորդվելով տնտեսական բարեփոխումներով, որոնք հաճախ ենթադրում էին մասնավոր սեփականության ազգայնացում, հանգեցրեց հայերի արտագաղթին: Արդեն 1975 թ. Լիբանանում սկսված քաղաքացիական պատերազմը և 1979 թ. իսլամական հեղափոխությունը Իրանում, ապա նաև իրանա-իրաքյան և Ծոցի պատերազմները պատճառ դարձան հսկայածավալ գաղթի դեպի Արևմուտք:

Հատկանշական է, որ Մերձավոր Արևելքից արտագաղթը չի կանգնում դրա անմիջական պատճառների՝ պատերազմների, հեղափոխությունների ավարտից հետո, այլ տարածաշրջանում շարունակվող անկայուն վիճակը մղում է այստեղ մնացած հայերին հեռանալու: Այս գործընթացը նոր թափով շարունակվում է նաև XXI դարում: Այն հատկապես դրսևորվեց 2003 թ. Իրաքում և 2011 թ. Սիրիայում սկսված պատերազմների ժամանակ: Կրկին ծավալվեց զգալի արտագաղթ, որի հետևանքով նախկինում գոյություն ունեցող համայնքների հզորությունը մարեց:

Տասը տարի տևող պատերազմական գործողությունների հետևանքով ամբողջ հայկական սփյուռքի համար չափազանց վճռական նշանակություն ունեցող սիրիահայ համայնքը թե՛ թվական, թե՛ համայնքային ներուժի տեսանկյունից արդեն մի

քանի անգամ զիջում է նախապատերազմական վիճակին: Չնայած գործադրվող ջանքերին՝ Սիրիայի համայնքի նախկին հզորության վերականգնումն անհնար է:

Քաղաքական չլուծված բազմապիսի հարցերով, սոցիալ-տնտեսական ճգնաժամով ու 2020 թ. օգոստոսի 4-ի պայթյունով պայմանավորված չափազանց հավանական է Լիբանանի հայօջախի նվաղումը, ինչի միտումներն արդեն նկատելի են:

Ծայրահեղականությունից և հակամարտություններից մեծապես տուժեցին նաև հետխորհրդային տարածաշրջանի հայկական համայնքները (առանձնաբար ԽՍՀՄ փլուզման ժամանակաշրջանում): Ամենամեծ կորուստը Ադրբեջանի տարածքում բնակվող հայերի արտագաղթն էր: Սրա արդյունքում էլ ավելի մեծացավ հետխորհրդային տարածաշրջանի այլ պետությունների (հատկապես ՌԴ) հայերի թիվը:

XX դ. վերջում ու XXI դ. սկզբում օտարազգիների հանդեպ անհանդուրժողականության շրջանակներում հակահայկականության դրսևորումներ նկատվեցին Ռուսաստանում: Այստեղ այլ օտարազգիների թվում տեղ գտան հալածանքներ ու սպանություններ հայերի նկատմամբ:

Ներկայումս հետխորհրդային երկրներում վերջնականապես լուծված չեն Հարավային Օսիայի, Աբխազիայի, Մերձդնեստրի, Ուկրաինայի հակամարտությունները: Վերջինում հայերի բնակության արեալը շատ ընդգրկուն է, ինչի հետևանքով տեղի հայությունը հայտնվեց ռազմական հակամարտության տարբեր կողմերում ու կրեց նյութական կորուստներ:

Այսպիսի երևույթներից հատկապես վերջին տասնամյակներում գրեթե զերծ մնացին ամերիկյան աշխարհամասում, եվրոպական երկրներում և Ասվտրալիայում բնակվող հայերը:

- **Հայերի համարկման (ինտեգրման) խնդիրները**

Զանազան տարածաշրջաններում, ազգային միջավայրերում ադապտացիոն և համարկման գործընթացներն ընթանում են տարբեր արագությամբ: Մերձավոր Արևելքի հայ համայնքներին բնորոշ է ամենայուրահատուկ մոդելը: Դրանք ընդունող հասարակությունների՝ որպես համայնքների մասն են կազմում: Ի տարբերություն սրա՝ մյուս բոլոր տարածաշրջաններում հայերը ընդունվում են որպես պետության սովորական քաղաքացիներ: Սա, բնականաբար, պայմանավորված է ընդունող երկրների ազգային փոքրամասնությունների նկատմամբ վարվող քաղաքականությամբ:

Հետխորհրդային տարածաշրջանին, որտեղ հայության մեծամասնությունը հայտնվել է ԽՍՀՄ փլուզման ժամանակներից, բնորոշ է դյուրին ադապտացիան՝ կապված մեկ կայսրության մեջ երկար ապրած լինելու հետ: Այս երկրներում քաղաքական, հասարակական, սոցիալ-տնտեսական, մշակութային բազմաթիվ երևույթներ ծանոթ են արտագաղթող հայերին, քանի որ հարյուրամյակներ շարունակ այդ պետությունները, ինչպես և Արևելյան Հայաստանի մեծ մասը գտնվել են Ռուսական կայսրության, ապա ԽՍՀՄ կազմում: Նշելի է նաև լեզվական գործոնը. ռուսերենի իմացությունը զգալիորեն նպաստել է այս տարածաշրջանում հաստատվող հայերի արագ ադապտացիային:

Եվրոպական երկրների համար ևս կարելի է շեշտել քաղաքակրթական, այդ թվում քրիստոնեական, որոշակի ընդհանրությունները տարբեր տարածաշրջաններից այստեղ գաղթող հայերի ինտեգրման դյուրացման գործում:

- **Հայ համայնքների քաղաքական ազդեցությունը**

Միևնույն չէ հայերի ունեցած քաղաքական կշիռը տարբեր տարածաշրջաններում: Այստեղ ևս, ինչպես համարկման պարագայում, կարևորագույն նշանակություն ունի պետության ընդհանուր կառուցվածքը:

Եթե Մերձավոր Արևելքում կան երկրներ, ինչպես օրինակ Թուրքիան, Լիբանանն ու Իրանը, որտեղ հայերը դիտարկվում են որպես կրոնական փոքրամասնություններ, ապա մյուս տարածաշրջաններում պետության տեսանկյունից նրանք հայկական ծագում ունեցող, բայց սովորական քաղաքացիներ են: Լիբանանում և Իրանում հայերին՝ որպես պետականորեն ընդունված փոքրամասնության, պաշտոնապես տրամադրվում են տեղեր օրենսդիր մարմնում, ինչը հնարավորություն է տալիս ունենալ թեկուզ փոքր, բայց գործուն (Լիբանանի պարագայում) ազդեցություն երկրի ներքաղաքական կյանքի վրա:

Մյուս՝ ամբողջությամբ աշխարհիկ կառուցվածքով պետական կառավարման համակարգեր ունեցող երկրներում, հայերը կարող են որոշակի գործոն լինել միայն մեծաթիվ լինելու պարագայում: Այդպիսի օրինակներ են ԱՄՆ-ը և Ֆրանսիան, որտեղ տարբեր ընտրությունների ժամանակ մրցակցող քաղաքական ուժերը երբեմն ստիպված են լինում հաշվի նստել հայկական համայնքների հետ: Վերջինը գերազանցապես արտահայտվում է Հայոց ցեղասպանության ճանաչման աշխատանքների խնդրում:

Սակայն չկան երկրներ որտեղ հայերն ունենան այնպիսի թվակազմ, որ կարողանան իրապես վճռական ազդեցություն ունենալ համապետական որոշումների կայացման վրա: Բավական ստվարաթիվ են հայկական համայնքները Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, սակայն ընդհանուր բնակչության տեսակարար կշռում դրանք էական չեն կարող լինել: Ուստի երբեմն

հայերի հետ՝ որպես գործոնի, տեղի քաղաքական ուժերը կարող են հաշվի նստել օրինակ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում, որտեղ, սակայն, նրանց կողմից համապետական բնույթի խնդիրների լուծումը խիստ դժվար է:

***

Այսպիսով, կարող ենք փաստել, որ տարբեր տարածաշրջաններն ունեն որոշակի առանձնահատկություններ: Տարբեր է դրանց մշակութային, սոցիալ-տնտեսական, քաղաքական համատեքստը, խնդիրների յուրահատկությունը, նաև այն գործոնները, որոնք խթանում կամ արգելակում են համայնքների ինքնակազմակերպումը: Չնայած դրանք, որպես կանոն, բնորոշ չեն տվյալ աշխարհագրական գոտու բացարձակ բոլոր երկրներին, սակայն ուրվագծում են որոշակի օրինաչափություններ:

Հարցադրումների քննարկում թեմայի շրջանակներում

- Ո՞ր դեպքերում են հայկական համայնքները թուլանում ու նվաղում:
- Որո՞նք են համայնքային կառույցների հիմնական առանձնահատկությունները «դասական» ու «նոր» սփյուռքներում:
- Ո՞ր գործոններն են նպաստում հայերի՝ տեղական միջավայրին արագ համարկմանը:
- Ինչպիսի՞ հեռանկար ունեն հայկական համայնքները Միջին Արևելքում:

Հետազոտական աշխատանքների թեմաներ

- Սիրիայի քաղաքացիական պատերազմը և հայ համայնքը:
- Արտագաղթը Հայաստանից անկախության շրջանում:

- ՌԴ հայկական համայնքի փոխակերպումը XX դ. վերջում ու XXI դ. սկզբում:
- Հայապահպանության հիմնախնդիրները Լիբանանի և ԱՄՆ-ի համայնքներում (համեմատական վերլուծություն):

ԹԵՄԱ V
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ

Հայկական սփյուռքի ձևավորման գործընթացը զուգահեռվեց կարևորագույն քաղաքական իրադարձություններով, որոնք հսկայական ազդեցություն ունեցան դրա վրա: Հայաստանի խորհրդայնացումը երկու ճամբարների բաժանեց հայկական սփյուռքը՝ համակիրների (ՍԴՀԿ, ՌԱԿ, հայ համայնավարներ) և ընդդիմադիրների (ՀՅԴ): Այս դիմակայությունը հատկապես սրվեց Սառը պատերազմի թեժ շրջանում՝ 1950-ական թթ., երբ առաջիններն ակտիվորեն համագործակցում էին խորհրդային իշխանությունների, իսկ երկրորդը՝ արևմտյան երկրների՝ մասնավորապես ԱՄՆ-ի հետ: Եթե սկզբնական շրջանում արտասահմանում հայտնված հայերը ցանկանում էին զերծ մնալ տեղական քաղաքական կյանքին մասնակցելուց՝ ապա հետագայում, իրերի բնական զարգացմամբ, ստիպված եղան մի շարք երկրներում ներգրավվել ներքաղաքական պայքարում:

Հայերի ներգրավվածությունն ընդունող երկրների քաղաքական կյանքին

Սփյուռքահայերի ներգրավումն ընդունող երկրների քաղաքական կյանքում, բնականաբար, առաջին հերթին պայմանավորված է տեղական պետական կառավարման համակարգերով: Եթե Լիբանանում, Իրանում, Կիպրոսում, Ռումինիայում հայերին՝ որպես ազգային փոքրամասնություն, հատկացված են տեղեր խորհրդարաններում, ապա ԱՄՆ-ում, Ֆրանսիայում կամ Ռուսաստանում նրանք դիտվում են տվյալ երկրների սովորական քաղաքացիներ:

Հայաստանից դուրս միակ երկիրը Լիբանանն է, որտեղ հայերը համակարգայնացված քաղաքական շոշափելի դերակատարություն ունեն: Այստեղ խորհրդարանի 128 պատգամավորներից 5-ը ընտրվում են հայ առաքելականների, իսկ 1-ը՝ հայ կաթոլիկների կողմից (1 տեղ էլ հատկացված է երկրի բոլոր բողոքականներին՝ այդ թվում հայ): Լիբանանում, Սփյուռքի ձևավորումից ի վեր, քաղաքական կյանքին հայերը մասնակցել են իրենց կուսակցություններով, նաև ֆորմալ առումով: Երբեմն դրանք դաշնակցել են տարբեր խմբավորումների հետ, երբեմն հանդես եկել միասնաբար: Բացի այդ՝ հայ համայնքն ունի պարտադիր տեղ կառավարության կազմում: Չնայած այստեղ ևս ՀՅԴ-ն առավել ազդեցիկ հայկական կուսակցությունն է, սակայն որոշակի դերակատարություն ունեն նաև ՍԴՀԿ-ն և ՌԱԿ-ը: Լիբանանի վերջին (2018 թ.) խորհրդարանական ընտրությունները ի ցույց դրեցին այն լուրջ մարտահրավերները, որոնք առկա են համայնքում կապված ավանդական կառույցների նկատմամբ վստահության պակասի հետ: Հայերին հասանելիք 6 խորհրդարանական տեղերից 3-ում ընտրվեցին ՀՅԴ ներկայացուցիչները, երկուսում՝ անկախ պատգամավորներ, իսկ մեկում (հայ կաթոլիկ)՝ Լիբանանյան ուժեր կուսակցության ներկայացուցիչը: Եթե հայկական ավանդական կուսակցություններից ընտրվածները ներկայացնում են իրենց համակիրների շրջանակն ու հայ համայնքը, ապա անկախ պատգամավորները հաճախ կարող են ավելի հետաքրքրված լինել համալիբանանյան խնդիրներով:

Չնայած, որպես կանոն, հայերը ներկայացված են եղել նաև Սիրիայի օրենսդիր մարմնում, սակայն պաշտոնապես այդ երկրում արգելված է ազգային փոքրամասնությունների քաղաքական գործունեությունը: Միաժամանակ, դե ֆակտո իշխանությունները հետաքրքրված են ազգային փոքրամասնությունների

ներկայության ապահովմամբ: 2020 թ. հուլիսին կայացած խորհրդարանական ընտրությունների արդյունքում խորհրդարան (ունի 250 անդամ) անցան 3 հայ պատգամավորներ:

Իրանի 290 հոգուց բաղկացած խորհրդարանում կրոնական փոքրամասնություններին հատկացված է 5 տեղ, որից 2-ը հայերին (մեկական՝ հրեաներին, ասորիներին և զրադաշտականներին): Չնայած այս առումով հայերն առաջատար են, սակայն թե՛ պատգամավորների քանակի, թե՛ ընդհանրապես ողջ երկրում թվաքանակի ու քաղաքական կշռի առումով շոշափելի ազդեցություն չեն կարող ունենալ պետությունում ընթացող գործընթացների վրա:

Կիպրոսի խորհրդարանում (ունի 56 անդամ) հայ համայնքին հատկացված է մեկ տեղ: Իրաքյան Քուրդիստանի 111 անդամից բաղկացած խորհրդարանում (11 տեղ է հատկացված ազգային փոքրամասնություններին) հայերը մեկ պատգամավորական տեղ ունեն, իսկ թուրքմեններն ու ասորիները՝ 5-ական:

Ի տարբերություն Մերձավոր Արևելքի՝ այլուր հայերի քաղաքական ներկայացվածությունը պայմանավորված է առանձին հայ անհատների գործունեությամբ, որում էական դեր չի կատարում նրանց ազգությունը (օրինակ՝ 2014 թվականից Ուկրաինայի ներքին գործերի նախարար Արսեն Ավակովը, 2017 թվականից Ավստրալիայի Նոր Հարավային Ուելսի վարչապետ, նույն նահանգի Լիբերալ կուսակցության ղեկավար Գլեդիս Բերեջիկլյանը, 2020 թ. հուլիսին Ստրասբուրգի քաղաքապետ ընտրված Ֆրանսիայի Կանաչների կուսակցության անդամ Ժաննա Բարսեղյանը):

Անհատների քաղաքական հաջողություններին իհարկե կարող է գումարվել տվյալ տարածաշրջանում մեծաթիվ հայկական համայնքի առկայությունը, ինչը սակայն խիստ սակավաթիվ վայ-

ներում կարող ենք նկատել: Այդպիսի օրինակ է Գլենդելը, որի քաղաքային խորհրդում վերջին շրջանում մշտապես ընդգրկված են լինում հայեր, որոնցից մեկն էլ հաճախ ընտրվում է քաղաքապետ: Ի հակադրություն սրան՝ կարելի է նշել ՌԴ պարագան, որտեղ ևս, չնայած առկա են հայահոծ բնակավայրեր, մասնավորապես երկրի հարավում, սակայն հայերի քաղաքական մասնակցությունը ավելի սահմանափակ է: Ընդ որում, այդպիսի մասնակցություն կարող է առկա լինել, սակայն էական դերակատարություն չունենալ հայ համայնքի ու Հայաստանի շահերի տեսանկյունից:

Հետաքրքիր է նաև, թե որ քաղաքական գաղափարական ուղղություններն են տիրապետող Սփյուռքում: Ընդհանրապես քաղաքական կողմնորոշման տեսանկյունից հասկանալիորեն չափազանց կարևոր է ընդունող երկրի ընդհանուր քաղաքական համակարգը: Օրինակ՝ սիրիահայերը մոտ կես դար ապրում են ավտորիտար իշխանության պայմաններում, որին բնորոշ չէ այլակարծությունը: Շատ հեռու չէ պատկերը Իրանի, Թուրքիայի պարագայում: Ի տարբերություն Մերձավոր Արևելքի՝ ամերիկյան և եվրոպական երկրների հայության համար հաճախ շատ ավելի կարևոր նշանակություն ունի ժողովրդավարությունը:

Որևէ երկրի համայնքին պատկանելը մեծ ազդեցություն է ունենում նաև աշխարհաքաղաքական խնդիրների շուրջ կողմնորոշման վրա: Իհարկե, ամերիկահայերի մեջ կարելի է գտնել ավելի ռուսամետների, սակայն շատ ընդհանրական առումով կարելի է ասել, որ օրինակ՝ արաբական երկրներում բնակվող հայերին ավելի բնորոշ է արաբա-իսրայելական հակամարտության խնդրում պաշտպանել առաջինին, Ռուսաստանի հայերին Ուկրաինայի հետ հակամարտությունում պաշտպանել առաջինին:

Հայկական քաղաքական կուսակցությունները Սփյուռքում

Ավանդաբար հայկական սփյուռքում գործել և շարունակում են գործել երեք հայկական քաղաքական կուսակցություններ՝ ՍԴՀԿ, ՀՅԴ և ՌԱԿ: Որոշ երկրներում դրանք իսկապես քաղաքական կուսակցություններ են, որոշ երկրներում էլ թե՛ դե յուրե, թե՛ դե ֆակտո ավելի մշակութային, ազգային, համայնքային կառույցներ են, որոնք կարող են գերազանցաբար զբաղվել հայապահպանության հարցերով:

ՍԴՀԿ-ն իր քաղաքական կշռով մեծապես պարտական է XIX դ. վերջում Կիլիկիայում ծավալած ակտիվ գործունեությանը: Այստեղ հարկ է ընդգծել երկու կարևոր հանգամանք.

1. Ներկայիս «դասական Սփյուռքի» զգալի մասը հատկապես Սիրիայում և Լիբանանում Կիլիկիայից գաղթած հայեր են,

2. Այսօր կուսակցական պատկանելությունը շատ մեծ չափով պայմանավորված է «ժառանգական» հանգամանքով և ոչ անպայման տվյալ անձի գաղափարաքաղաքական կողմնորոշմամբ:

Հետևաբար ՍԴՀԿ-ն, որը ժամանակին ակտիվ գործունեություն էր ծավալել Կիլիկիայում, Սփյուռքի ձևավորումից հետո լավ հնարավորություն ստացավ գործելու նոր կազմավորվող համայնքներում: Այն մեծ թվով անդամներ կորցրեց հատկապես Մեծ հայրենադարձության տարիներին՝ 1946-1949 թթ., երբ Խորհրդային Հայաստանի հանդեպ դրականորեն տրամադրված և «սոցիալիզմի երազը» մայր հայրենիքում իրականացված համարող բազմաթիվ կուսակցականներ ներգաղթեցին: Չնայած դրան, Հնչակյան կուսակցությունը պահպանում է որոշակի ազդեցություն՝ մասնավորապես տիրապետող է Բեյրութի Նոր Հաճընն թաղամասում, մինչև Սիրիական պատերազմն ուներ ոչ գերիշխող, սակայն կայուն և շոշափելի ներկայություն Հալեպում:

Համեմատության համար հարկ է նշել, որ հնչակյանները շատ ավելի ազդեցիկ դիրքեր ունեն Դամասկոսում, որի թեմն էլ, ի դեպ, պատկանում է ոչ թե Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանը, այլ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Հնչակյանները որոշակի ազդեցություն ունեն նաև ԱՄՆ արևմտյան ափում, Արգենտինայում, Ուրուգվայում և այլուր:

Չնայած հնչակյանները շարունակում են դավանել սոցիալիստական գաղափարախոսություն՝ հաճախ տվյալ կուսակցությանն անդամակցելիս ոչ պակաս դեր էին կատարում ԽՍՀՄ նկատմամբ դիրքորոշումը, Էջմիածինը Անթիլիասից գերադասելը:

ՀՅԴ-ն Սփյուռքում իր գերիշխող դրության համար պարտական է 1890-ական թթ. կեսերից հայ ազատագրական պայքարում առաջատար դեր զբաղեցնելուն, ինչպես նաև 1918-1920 թթ. Հայաստանում ծավալած գործունեությանը: Դասական սփյուռքի ձևավորման մեջ էական նշանակություն ունեցան նախկինում ՀՀ պետության ղեկավար մի շարք անձինք: Սփյուռքի գոյության ողջ շրջանում, գրեթե բոլոր երկրներում, այն ունեցել է առաջատար դիրք, որը, անշուշտ, պայմանավորված է նաև այդ կուսակցության կազմակերպական կառույցով: Առկա են որոշ համայնքներ (Իրան, Իրաք), որտեղ ՀՅԴ-ն ունեցել է գրեթե մենատիրական ազդեցություն և մյուս կուսակցությունները համակիրների շոշափելի զանգված չեն ունեցել:

Մերձավոր Արևելքի երկրներում ՀՅԴ ազդեցության հետևանք էր նաև 1956 թ. եկեղեցական բաժանումը, ինչից հետո Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությանն անցան նաև նախկինում էջմիածնապատկան թեմեր (Իրանի երեք թեմերը, Հունաստանի թեմը, թեմեր ստեղծվեցին ԱՄՆ-ում ու Կանադայում[17]): Լի-

[17] ԱՄՆ-ում ու Կանադայում թե՛ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, թե՛ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն ունեն երեքական զուգահեռ թեմեր: Ծոցի երկրնե-

բանանից զատ, որի մասին արդեն խոսվեց, ՀՅԴ-ն փաստացի ներկայացված է նաև Սիրիայի, Իրանի խորհրդարաններում: Բացի Մերձավոր Արևելքից՝ այն բավականին ուժեղ կառույցներ ունի նաև Ֆրանսիայում, Հունաստանում, ԱՄՆ արևելյան և արևմտյան շրջաններում, Կանադայում, Ավստրալիայում, Հարավային Ամերիկայի համայնքներում:

Ինչո՞ւ են սփյուռքահայերն անդամակցում այս կուսակցությանը. որպես ամենաակտիվ քաղաքական միավորի, Հայ դատի պայքարում ներգրավվելու նպատակով, նկատի առնելով, որ այն մյուս երկու կուսակցությունների համեմատ ունի ամենահագեցած պատմությունը, ինչպես և մյուսների պարագայում՝ հաշվի առնելով ընտանիքի ավանդական կողմնորոշումը: Էական է նաև ՀՅԴ հովանու ներքո գործող Համազգային հայ կրթական և մշակութային միության, Հայ մարմնակրթական ընդհանուր միության, Հայ օգնության միության ակտիվ գործունեությունը՝ իրենց համաշխարհային կազմակերպական ցանցերով:

ՌԱԿ-ը ստեղծվեց սփյուռքյան պայմաններում՝ 1921 թ., սակայն ներառելով արմենական, վերակազմյալ հնչակյան և այլ գործիչների՝ կարողացավ շոշափելի դերակատարություն ստանձնել: Կարևոր նշանակություն ունեցավ Հայկական բարեգործական ընդհանուր միության հետ սերտ առնչությունը, որը կուսակցություններից զատ Սփյուռքի ամենախոշոր կառույցներից է: ՌԱԿ-ը, դավանելով ազատական գաղափարներ, իր շարքերում ներառեց նաև սփյուռքահայերի համեմատաբար ունևոր շրջանակներ ինչը, բնականաբար, նպաստում էր մի շարք խնդիրների լուծմանը: Այս կուսակցության պատմության համար կարևորագույններից է եղել Եգիպտոսի հայ համայնքը, որտեղ

րի նորաստեղծ համայնքները ի սկզբանե եղել են Անթիլիասի ենթակայության տակ:

այն կարողացել է հաջող քաղաքական պայքար մղել ՀՅԴ հետ: Լիբանանի խորհրդարանում ՌԱԿ-ը վերջին անգամ ներկայացուցիչ ունեցել է 2005 թ. ընտրությունների արդյունքում: Այս կուսակցությունը էական ազդեցություն ունի նաև Կանադայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ արևմտյան և արևելյան շրջաններում, Ավստրալիայում և այլուր:

Ռամկավար կուսակցությանն անդամակցությունը, բացի ընտանեկան ավանդույթից, պայմանավորված էր Սառը պատերազմի ժամանակ «էջմիածնական» դիրքորոշմամբ, Խորհրդային Հայաստանը (բայց ոչ կոմունիզմը) պաշտպանելով:

Հայ կոմունիստները քիչ թե շատ շոշափելի դեր են ունեցել Լիբանանում, Սիրիայում, ԱՄՆ-ում (1920-ական թթ.), Ֆրանսիայում: Նրանք խորհրդային տարիներին համագործակցում էին ԽՍՀՄ-ի հետ:

Քաղաքական (սակայն ոչ ներհայկական/ներհամայնքային) գործունեություն են ծավալում Հայ դատի գրասենյակներն ու Ամերիկայի հայկական համագումարը: Ընդ որում, ՀՅԴ հայ դատի գրասենյակները գործում են ոչ միայն ԱՄՆ-ում՝ այլև Մերձավոր Արևելքում, Եվրոպայում, Հարավային Ամերիկայում, Ավստրալիայում, Ռուսաստանում:

Հարաբերությունները Հայաստանի հետ

Խորհրդային տարիներին Սփյուռքի հետ հարաբերությունները բավականին խնդրահարույց էին, քանի որ հայրենիքը շեշտը դնում էր քաղաքական կողմնորոշման վրա: 1920-ական թթ. նույնիսկ այն կուսակցությունները, որոնք ընդունում էին Հայաստանում հաստատված վարչակարգը (ՍԴՀԿ, ՌԱԿ)՝ արժանանում էին թշնամական վերաբերմունքի: ՀՕԿ-ի միջոցով Խորհրդային Հայաստանը փորձում էր ֆինանսական օգնություն

ստանալ արտասահմանից: 1937 թ. բոլոր տեսակի հարաբերությունները դադարեցվեցին, քանի որ խորհրդային կառավարությունը սփյուռքահայերի մեջ առաջին հերթին տեսնում էր լրտեսների: 1946-1949 թթ. հայրենադարձվողներից շատերը մինչև ներգաղթելը ստիպված եղան հրապարակավ սփյուռքահայ թերթերում հրատարակել տալ իրենց հրաժարագրերը (մասնավորապես ՀՅԴ-ից): Սակայն դա դեռևս նախապայման չէր, որ 1949 թ. կապահովագրեր նրանց՝ Ալթայի երկրամաս աքսորից:

Սփյուռքահայ կուսակցությունների հետ քիչ թե շատ կայուն հարաբերություններ հաստատվեցին 1950-ական թվականներից սկսած՝ հատկապես 1964 թ. Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի ստեղծմամբ: Չնայած կրթամշակութային և այլ ոլորտներում բավական սերտ գործակցությանը՝ Հայաստանի ղեկավարները ՍԴՀԿ և ՌԱԿ ղեկավարների հետ պաշտոնապես հանդիպում էին որպես «սփյուռքահայ հասարակական գործիչների» ոչ թե որպես կուսակցությունների ղեկավարների: ՀՅԴ-ի հետ հարաբերություններ հաստատվեցին միայն 1980-ական թթ. վերջում:

Դրությունը սկզբունքորեն փոխվեց Հայաստանի անկախացմամբ: Եթե ՌԱԿ ու ՍԴՀԿ գործունեության համար չկային պաշտոնական սահմանափակումներ, ապա 1992 թ. ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրայր Մարուխյանի արտաքսումը և 1994 թ. դեկտեմբերին կուսակցության գործունեության կասեցումը բացասական ազդեցություն ունեցավ ընդհանրապես Հայաստան-Սփյուռք հարաբերությունների վրա: Չնայած մյուս երկու կուսակցությունները կարող էին գործել, սակայն ունեին մի շարք դժվարություններ սոցիալական հենարան ու համակիրների շրջանակ ձևավորելու հարցում: Դրան հակառակ, տասնամյակներով հայրենիքում արգելված ՀՅԴ հայտնվելը շատ հայաստանցիների

մղեց անդամագրվելու այս կառույցին: Այն, որ այս կուսակցություններից ՀՀ քաղաքական կյանքում ամենահաջողակը եղավ ՀՅԴ-ն պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ մի շարք սփյուռքահայեր եկան և հիմնադրեցին տեղական կառույցներ ՀՀ-ում և Արցախում, որոնք շոշափելի դերակատարում ունեցան Արցախյան պատերազմում:

Հետագայում ՍԴՀԿ ու ՌԱԿ հարաբերությունները ՀՀ իշխանությունների հետ կարելի է համարել քիչ թե շատ կայուն: Չկարողանալով շոշափելի դեր խաղալ հայաստանյան կյանքում՝ նրանք կարծես համակերպվեցին միայն Սփյուռքում գործելու հետ: Այլ էր ՀՅԴ պարագան, որի սփյուռքահայ կառույցների վերաբերմունքը ՀՀ իշխանությունների նկատմամբ զգալի չափով կախված էր նրանից, արդյոք կուսակցությունը գտնվում էր իշխող կոալիցիայում, թե դիրքավորվել էր որպես ընդդիմություն[18]:

Որպես երկխոսության հարթակ են դիտվել Հայաստան-Սփյուռք համաժողովները, չնայած վերջիններում քննարկումները երբեմն բավական հեռու են եղել գործնական նշանակություն ունենալուց: Ինչպես սփյուռքահայ այլ կառույցների, այդպես էլ քաղաքական կուսակցությունների հետ կապող օղարկ էր դիտվում Սփյուռքի նախարարությունը, իսկ այժմ՝ Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ բոլոր կուսակցությունների Սփյուռքի մարմինները անկախ իշխանությունների հետ հարաբերություններից փորձում են որոշակի գործունեություն ծավալել հայրենիքում՝ նպաստելով տարբեր սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ խնդիրների լուծմանը: Դրա համար նրանք հա-

[18] Ի դեպ, ՀՅԴ-ի իշխանությունում հայտնվելու գործում բավական էական էր այն հանգամանքը, որ ՀՀ իշխանությունները ցանկանում էին հավելյալ լեգիտիմություն ստանալ Սփյուռքում:

մագործակցում են զանազան պետական, համայնքային, հասարակական կազմակերպությունների հետ:

***

Հայկական կուսակցությունները կարևորագույն դերակատարություն են ունեցել Սփյուռքի ձևավորման շրջանում, սակայն այժմ նրանց ազդեցությունը զգալիորեն թուլացել է և հավանական է, որ շոշափելի վերափոխումներ չիրականացնելու պարագայում շարունակի նվազել: Եթե Մերձավոր Արևելքի մի շարք համայնքներում կուսակցություններն ունեին տիրապետող դիրքեր, ապա արևմտյան երկրներում (ինչպես բոլոր հայկական կառույցներին) տոկոսային առումով հայերի ավելի փոքր մասն է անդամակցում դրանց: Եթե խորհրդային և անկախության առաջին տարիներին Հայրենիք-Սփյուռք հարաբերություններում կուսակցություններին վերապահվում էր մեծ դեր, ապա այժմ աստիճանաբար ավելի ու ավելի է մեծանում անհատական մակարդակով համագործակցությունը ՀՀ պետական ու ոչ պետական զանազան կառույցների ու անհատների հետ:

Հարցադրումների քննարկում թեմայի շրջանակներում

- Ինչպիսի՞ ազդեցություն են ունենում ընդունող երկրների քաղաքական համակարգերը հայկական համայնքների կենսագործունեության վրա:
- Ի՞նչ դերակատարում ունեն Սփյուռքում գործող հայկական քաղաքական կուսակցությունները Հայաստանի Հանրապետությունում:
- Որքանո՞վ են տարբեր երկրներում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող հայերը ներգրավված համայնքային կյանքում:

- Որքանո՞վ են սփյուռքահայերը ներգրավված ավանդական կուսակցությունների աշխատանքներին:

Հետազոտական աշխատանքների թեմաներ

- Հայկական քաղաքական կուսակցությունների գործունեությունը Լիբանանում:
- Հայերի մասնակցությունը Լիբանանի խորհրդարանական ընտրություններին:
- Հայ համայնքի հարաբերությունները Սիրիայի իշխանությունների հետ:
- Հայկական լոբբիստական կառույցների գործունեությունը ԱՄՆ-ում:
- Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների արդի մարտահրավերները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայոց ցեղասպանությունից հետո արևմտահայության վերապրած հատվածը հայտնվեց աշխարհի մի շարք՝ հատկապես Մերձավոր և Միջին Արևելքի ու Բալկանյան երկրներում: Քեմալականների կողմից Կիլիկիան գրավելուց ու 1923 թ. Լոզանի խորհրդաժողովից հետո ի դերև ելան նույնիսկ ազգային օջախ ստեղծելու հույսերը: Այդ պայմաններում միակ վայրը որտեղ կար թեկուզ ոչ անկախ, բայց այնուամենայնիվ հայկական պետականություն՝ խորհրդայնացված Հայաստանն էր: Թեև Առաջին հանրապետության ղեկավարները կատարեցին ներգաղթի որոշ փորձեր, սակայն հասկանալիորեն երկու տարում նրանք չէին կարող բավարարել այն պահանջարկը, որը կար Սփյուռքում: Իսկ հայրենադարձության ցանկությունը մեծ էր գաղթականներում իրենց գոյությունը հազիվ պահպանող բազամահազար արևմտահայերի մոտ:

Այս պայմաններում, 1921 թ. մեկնարկեց ՀԽՍՀ կազմակերպած ներգաղթի առաջին փուլը: Իրաքի գաղթականներում հայտնված վասպուրականցիներից հետո մինչև 1936 թ. հայրենիք վերադարձան ևս 40 հազար տարագիրներ: 1930–ական թթ. վերջում՝ բռնությունների շրջանում դադարեցվեց ոչ միայն ներգաղթը, այլև ընդհանրապես կապերը Սփյուռքի հետ: Սակայն Երկրորդ աշխարհամարտից հետո խորհրդային վարչակարգի մոտ ծրագրեր ուրվագծվեցին 1921 թ. Թուրքիային զիջած տարածքների մի մասը ԽՍՀՄ-ին կցելու վերաբերյալ: Հենց այս խնդրի լուծման գործիքներից մեկը պետք է լիներ աշխարհացրիվ հայրենազրկված հայերի իրավունքների վերականգնումը: Ինչպես հայտնի է, տարածքային պահանջները այդպես էլ չլուծվեցին, սակայն հայրենադարձություն տեղի ունեցավ: 1946-1949

թթ. 90 հազար հայերի ներգաղթը պատմագիտության մեջ ստացավ «Մեծ հայրենադարձություն» անվանումը: Այն կարևոր էր ոչ միայն քանակական, այլև որակական առումով: 1962 թ. մեկնարկեց խորհրդային շրջանի հայրենադարձության վերջին փուլը: Մոտ երկուսուկես տասնամյակների ընթացքում հայրենիք վերադարձավ ավելի քան 30 հազար մարդ, սակայն մոտ նույնքանն էլ լքեց Հայաստանը: Սկիզբ էր առնում արտագաղթի գործընթացը, որն արդեն անկախության տարիներին աղետալի ծավալների պետք է հասներ:

Ինչպիսի՞ պատկեր ունի հայկական սփյուռքը այսօր: Այն կենտրոնացած է չորս մեծ տարածաշրջաններում՝ Միջին Արևելք, Ամերիկա, Եվրոպա և հետխորհրդային երկրներ: Դրանցից յուրաքանչյուրում առկա են մի շարք առանձնահատկություններ, որոնք տեղական համայնքները դարձնում են ինքնատիպ: Վերջին ավելի քան յոթ տասնամյակների ընթացում նվաղում ու նոսրանում են առաջին տարածաշրջանի համայնքները, մինչդեռ մյուս երեքում հայերի թիվը գնալով ավելանում է: Սակայն մինչ օրս դրանցում չի հաջողվում ձևավորևել հայապահպանության այն մեխանիզմները, որոնք առկա են առաջինում:

Ընդունող երկրների քաղաքական կյանքին հայերի մասնակցության տեսանկյունից ևս առկա են մի շարք յուրահատկություններ: Հասկանալիորեն առաջնային նշանակություն ունի պետական կառավարման համակարգը: Չնայած հայկական կուսակցությունների ուժն ու ազդեցությունն աստիճանաբար թուլանում է՝ մի շարք երկրներում բարձրաստիճան պաշտոններ են զբաղեցնում հայ անհատները: Սակայն վերջին պարագան միշտ չէ, որ շոշափելի ներգործություն է ունենում հայկական համայնքների կենսագործունեության վրա:

Հայկական սփյուռքի նկատմամբ հետաքրքրությունը վերջին տարիներին ոչ միայն չի նվազում, այլև զգալիորեն ավելանում է, որի վկայությունն են վերջին տասնամյակում հրապարակված հետազոտությունները: Չնայած դրան՝ առկա են բազմաթիվ հիմ-նախնդիրներ, որոնք սպասում են հետազոտական նոր գրչի:

ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Փաստաթղթերի ժողովածուներ

1. Եազըճեան Գ., Սփիւռքահայ քաղաքական հոսանքներն ու գաղութները խորհրդային գաղտնի փաստաթուղթերու մէջ (1945-1991, ընտրանի), Եր., 2016:
2. Իրաքահայ համայնքը 1915-1990 թվականներին (ըստ արխիվային փաստաթղթերի), գլխ. խմբ.՝ Ա. Վիրաբյան, կազմ.՝ Գ. Ավագյան, Եր., 2018:
3. Լիբանանահայ համայնքը 1915-1990 թվականներին (ըստ արխիվային փաստաթղթերի), գլխ. խմբ.՝ Ա. Վիրաբյան, կազմ.՝ Գ. Ավագյան, Եր., 2017:
4. Հայրենիք-Սփյուռք կամրջող անուն: Վ. Համազասպյան (փաստաթղթերի ժողովածու), կազմ. և ծանոթագր.՝ Ս. Միրզոյան և Մ. Մարտիրոսյան, Եր., 2011:

Գրականություն

Հայերեն

1. «1946-1948 թթ. հայրենադարձությունը և դրա դասերը. հայրենադարձության հիմնախնդիրն այսօր» համահայկական գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2009:
2. Աբրահամյան Լ., Հայաստանը և հայկական սփյուռքը. տարանջատում և հանդիպում, «21-րդ դար», 2006, թիվ 1, էջ 31-52:
3. Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1917– 1941 թթ., Եր., 2011:

4. Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941–1991 թթ., Եր., 2016:
5. «Արևմտահայերենի ուսուցման վիճակը Սփյուռքում» զեկույցների ժողովածու, Եր., 2011:
6. Բախչինյան Ա., Հայությունը սկանդինավյան երկրներում. Հայ-սկանդինավյան պատմամշակութային առնչությունները (սկզբից մինչև մեր օրերը), Եր., 2010:
7. Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., 2013:
8. Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն (Հյուսիսային Կովկաս, Նոր Նախիջևան, Աստրախան, Սանկտ Պետերբուրգ, Մոսկվա), Եր., 2015:
9. Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն (համառոտ ակնարկ), Եր., 2004:
10. Դոնի հայկական համայնքը նորագույն շրջանում. պատմություն, ինստիտուտներ, ինքնություն (գիտական հոդվածների ժողովածու), կազմ.՝ Է. Մինասյան: Եր., 2020:
11. Եղիազարյան Ա., Հայ սփյուռքի պատմության պարբերացումը, «Հայագիտության հարցեր», 2014, թիվ 2, էջ 33-51:
12. Եղիազարյան Ա., ՀՅԴ-ի գործունեությունը գաղթավայրերում 1920-ական թթ. և համագաղութային համագումարի հրավիրման խնդիրը, «Պատմություն և մշակույթ», 2020, թիվ 2, էջ 237-248:
13. Եղիազարյան Ա., Հովհաննիսյան Է., Անանյան Մ., Հովհաննիսյան Ա., Հովսեփյան Մ., Վարդանյան Հ., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1918 թվականից մինչև մեր օրերը, Եր., 2017:

14. Եղիազարյան Ա., Ռամկավար ազատական կուսակցության գործունեության հիմնական ուղղությունները 1920-ական թթ., «Հայագիտության հարցեր», 2018, թիվ 3, էջ 68-84:
15. Եղիազարյան Ա., Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության գործունեության հիմնական ուղղությունները 1920-1930-ական թթ., «Գիտական Արցախ», 2019, թիվ 1, էջ 359-371:
16. Եղիազարյան Լ., Նալբանդյան-Մարգարյան Մ., Բրազիլա-հայ համայնքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2007, թիվ 3, էջ 66-76:
17. Թեոլեոլյան Խ., Վերաքննելով սփյուռք(ներ)ը. պետականազուրկ իշխանությունն անդրազգային թոհուբոհում, Հայ սոցիոլոգիական մտքի անթոլոգիա, Եր., 2018, էջ 236-247:
18. Թէօլէօլեան Խ., Սփիւռքի մէջ, Փարիզ, 1980:
19. Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Եր., 1978:
20. Իրաքի Հայերը: Գիտաժողովի Նիւթեր (29-31 Մայիս 2017)/Armenians of Iraq Proceedings of the Conference (29-31 May 2017), ed. by A. Dakessian, Beirut, 2021:
21. Լիբանանահայերն այսօր. էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, պատ. խմբ.՝ Ռ. Կարապետյան, Ա. Տագէսեան, Ս. Բարսեղյան, Եր., 2019:
22. Լիբանանի Հայերը (Բ.) Գիտաժողովի Նիւթեր (14-16 Մայիս 2014)/Armenians of Lebanon (II) Proceedings of the Conference (14-16 May 2014), ed. by A. Dakessian, Beirut, 2017:
23. Կարապետյան Ռ., Հայ համայնքները այսօր. Թեհրանի, Լոս Անջելեսի, Բեյրութի, Փարիզի, Թբիլիսիի հայերի էթնոսոցիոլոգիական ուսումնասիրություններ, Եր., 2018:

24. Կարապետյան Ռ., Միգրացիան և հայկական նոր սփյուռքը, Եր., 2013:
25. «Հայ գաղթականությունը և Հայրենիք-Սփյուռք կապերը 1918-1985 թթ.» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Եր., 2011:
26. Հայ էթնիկությունը սեփական և այլազգի միջավայրում. խնդիրներ, հետազոտական փորձեր և հեռանկարներ, խմբ.՝ Ռ. Կարապետյան, Կ. Նալբանդյան, Ս. Բարսեղյան, Եր., 2014:
27. Հայ ընտանիքն արդի մարտահրավերների համատեքստում, պատ. խմբ.՝ Ռ. Կարապետյան, խմբ.՝ Ս. Բարսեղյան, Եր., 2019:
28. «Հայ սփյուռք» հանրագիտարան, Եր., 2003:
29. Հայերը սեփական և այլազգի միջավայրում. համեմատական էթնոսոցիոլոգիական հետազոտություններ, պատ. խմբ.՝ Ռ. Կարապետյան, Եր., 2014:
30. «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում» գիտաժողովի նյութեր, Եր., 2013:
31. Հարությունյան Լ., Փաշայան Ա., Ծոցի արաբական երկրների հայ համայնքները. արդի հիմնախնդիրներ, Եր., 2013:
32. Ղանալանյան Տ., Սփյուռքի ներքին տեղաշարժերը 1950-1980-ական թվականներին, Եր., 2016:
33. Ղանալանյան Տ., Տեղահանված հայերի փոխադրումը Ամերիկա Երկրորդ աշխարհամարտից հետո, «Էջմիածին», 2015, թիվ ԺԲ, էջ 69-89:
34. Ղասաբյան Զ., Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության (1896-1970), Եր., 1986:

35. Մատթէոսեան Վ., Հարաւային կողմն աշխարհի. Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչև 1950, Անթիլիաս, 2005:
36. Մարտիրոսյան Հ., Իրանահայ գաղութի պատմությունից (նորագույն շրջան), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. 8, Եր., 1975, էջ 193-288:
37. Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985:
38. Մելքոնյան Է., Հայ գաղթականություն. տերմինների պատմությունից, Եր., 2017:
39. Մելքոնյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության և սփյուռքի քաղաքական փոխհարաբերությունների հարցի շուրջ, «Սփյուռքագիտություն. տեսության և պատմության հարցեր» տարեգիրք, Եր., 2012, էջ 102-122:
40. Մելքոնյան Է., Հայկական բարեգործական ընդհանուր միության պատմություն, Եր., 2005:
41. Մինասյան Է., Հայրենիք-Սփյուռք առնչությունները 21-րդ դարասկզբին (2001-2017), Եր., 2018:
42. Մինասյան Է., Մայիլյան Բ., Մխոյան Հ., Հյուսիսային Կովկասի հայկական համայնքները 20-րդ դարում. պատմություն և մարտահրավերներ, Եր., 2018:
43. Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), Ստեփանակերտ, 2010:
44. Յախշյան Ք., Մերձավոր և Միջին Արևելքի երկրների հայկական համայնքների պատմության ուսումնասիրությունը 1960-ական թվականներին, «Ակունք», 2015, թիվ 2, էջ 21-32:

45. Յորդանանի հայերը Գիտաժողովի Նիւթեր (22-24 Մայիս 2016)/Armenians of Jordan Proceedings of the Conference (22-24 May 2016), ed. by A. Dakessian, Beirut, 2019:
46. Չիլինգիրյան Հ., Միջին Արևելքի հայկական համայնքները պարտադրված իրականության և անորոշ ապագայի միջև, «Վերլուծական տեղեկագիր» ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն, հ. 7, Եր., 2015, էջ 217-248:
47. Չոլաքեան Յ., 1946-1947 թուականներու հայրենադարձութիւնը և անոր հետևանքները սուրիահայ գաղութին վրայ, «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2018, թիվ 2, էջ 47-61:
48. Չոլաքեան Յ., Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը (Պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն), Անթիլիաս, 2006:
49. Չոլաքեան Յ., Քեսապ, հ. Ա, հ. Բ, հ. Գ, Հալէպ, 1995, 1998, 2004:
50. Պետրոսյան Ք., Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները 1988-2001 թթ., Եր., 2011:
51. «Ռուսաստանի Դաշնության հայկական սփյուռքը» միջազգային գիտաժողով (զեկուցումների ժողովածու), Եր., 2018:
52. Սահակյան Վ., Վերաիմաստավորելով Հայաստան-Սփյուռք քննախոսությունը. Լեզու(ներ), մշակույթ(ներ), փոխհարաբերություն(ներ), Հայ սոցիոլոգիական մտքի անթոլոգիա, Եր., 2018, էջ 528-538:
53. Սիմավորյան Ա., Հովյան Վ., Ղանալանյան Տ., Արտերկրի հայագիտական կենտրոնները. ներուժի գնահատում, Եր., 2014:
54. Սիրիահայերը Հայաստանում. ինտեգրման ուղիները, պատ. խմբ.՝ Ռ. Կարապետյան, Ս. Բարսեղյան, Եր., 2015:

55. Ստեփանյան Ա., XX դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., 2010:
56. Սուրիոյ հայերը Գիտաժողովի Նիւթեր (24-27 Մայիս 2015)/Armenians of Syria Proceedings of the Conference (24-27 May 2015), ed. by A. Dakessian, Beirut, 2018:
57. Վարդանյան Հ., Սփյուռքի տիպաբանությունը և հայ սփյուռքը, «Պատմություն և մշակույթ», 2020, թիվ 1, էջ 202-208:
58. Վարդանյան Հ., Տեսաբանական ակնարկ սփյուռքի քաղաքական դերակատարության շուրջ, «Պատմություն և մշակույթ», 2018, էջ 253-260:
59. Տագէսեան Ա., Լիբանանի հայօճախը, Գիրք Ա. Համարկումին խաչուղիները (1920-2005), Պէյրութ, 2015:
60. Տագէսեան Ա., Պատմութիւն ՌԱԿ Լիբանանի շրջանակի (1922-1937), Պէյրութ, 1993:
61. Տանաջեան Լ., Ներսիսեան Ս., Թբիլիսիի հայ համայնքի ներկայ իրավիճակը, «Հայկազեան հայագիտական հանդէս», հտր. ԼԸ (38), Պէյրութ, 2018, էջ 641-654:
62. Փահլևանյան Հ., Իրանահայ համայնքը (1941-1979 թթ.), Եր., 1989:
63. Փանոսեան Ռ., Տեսական հայեցակարգ հայրենիք-սփիւռք յարաբերութիւններու. հետեւութիւններ, նկատողութիւններ եւ առաջարկներ, «Սփյուռքագիտություն» տարեգիրք, Եր., 2012, էջ 31-43:
64. Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., 2011:
65. Օհանեան Ս., Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն, Եր., 2016:
66. Ֆիշենկճեան Ա., Սուրիոյ Հայ Համայնքի Պատմութիւնը (1946-1970 թթ.), Եր., 2018:

Անգլերեն

67. Abrahamyan V., Citizen Strangers: Identity Labeling and Discourse in the French Mandatory Syria, 1920-1932, "Journal of Migration History", Volume 6 (2020), pp. 40-61.
68. Armenians around the World: Migration and Transnationality, ed. by A. Mkrtichyan, Frankfurt am Main, 2015.
69. Armenians in Post-Socialist Europe, K. Siekierski, S. Troebst (eds.), Wien, Köln, Weimar, 2016.
70. “Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community” The Trilingual Proceedings of the Conference Held in Haigazian University, Lebanon, September 12-15, 2005, ed. by A. Boudjikanian, Beirut, 2009.
71. Bakalian A., Armenian-Americans: from being to feeling Armenian, New Brunswick, 1993.
72. Chichekian G., The Armenian community of Québec, Montreal, 1989.
73. Cohen R., Global Diasporas: An Introduction, Second edition, London and New York, Routledge, 2008.
74. Cowe P., Church and diaspora: the case of the Armenians, The Cambridge History of Christianity, Vol. 5 Eastern Christianity, ed. by M. Angold, Cambridge University Press, 2008, pp. 430-456.
75. Der-Karabetian A., Armenian Ethnic Identity in Context: Empirical and Psychosocial Perspective, Beirut, 2018.
76. Der Matossian B., The Armenians of Jerusalem in the modern period: the rise and decline of a community, Routledge Handbook on Jerusalem, New York, 2019, pp. 396-407.
77. Diaspora and Transnationalism: Concepts, Theories and Methods, ed. by R. Bauböck, Th. Faist, Amsterdam, 2010.

78. Diasporas of the Modern Middle East Contextualising Community, ed. by A. Gorman, S. Kasbarian, Edinburgh, 2015.
79. Diasporas Reimagined Spaces, Practices and Belonging, ed. by N. Sigona, A. Gamlen, G. Liberatore, H. N. Kringelbach, Oxford, 2015.
80. Ekmekçioğlu L., Recovering Armenia The Limits of Belonging in Post-Genocide Turkey, Stanford, 2016.
81. Hadjilyra A., The Armenians of Cyprus, Nicosia, 2012.
82. Hofmann T., Armenians in Turkey Today: A Critical Assessment of the Situation of the Armenian Minority in the Turkish Republic, Brussels, 2002.
83. Hovhannisian R., The Ebb and Flow of the Armenian Minority in the Arab Middle East, "Middle East Journal", Vol. 28, No. 1 (Winter, 1974), pp. 19-32.
84. Laycock L., Armenian Homelands and Homecomings, 1945–9, "Cultural and Social History", 2012, Volume 9, Issue 1, pp. 103-123.
85. Migliorino N., (Re)constructing Armenia in Lebanon and Syria, New York, 2008.
86. Mirzaian A., Armenians in Australia and New Zealand, Sydney, 1966.
87. Safran W., Diasporas in Modern Societies: Myths of Homeland and Return, "Diaspora: A Journal of Transnational Studies", 1991, Volume 1, Number 1, pp. 83-99.
88. Sahakyan V., Spaces of Difference, Spaces of Belonging: Negotiating Armenianness in Lebanon and France, An Armenian Mediterranean: Words and Worlds in Motion, ed. by K. Babayan, M. Pifer, New York, 2018, pp. 247-267.
89. Sanjian A., Homeland-Diaspora Relations under Khrushchev and Brezhnev Soviet Embassy Reports from Beirut on the Armenian Community in Lebanon, 1959-1982, "Armeniens et

Grecs en diaspora: approches comparatives" M. Bruneau, I. Hassiotis, M. Hovanessian and C. Mouradian (eds.), Athens, 2007, pp. 273-282.
90. Suciyan T., The Armenians in Modern Turkey: Post-Genocide Society, Politics and History, London, 2016.
91. Talai V. A., Armenians in London: The Management of Social Boundaries, Manchester University Press, 1989.
92. The Armenian community of Thessaloniki: History, present situation, and prospects, in I. K. Hassiotis (ed.), Thessaloniki, 2005.
93. The Call of the Homeland: Diaspora Nationalisms, Past and Present, ed. by A. Gal, A. S. Leoussi, A. D. Smith, Leiden; Boston, 2010.
94. Tölölyan Kh., Diaspora Studies: Past, Present and Promise, International Migration Institute, 2012.
95. Tölölyan Kh., Elites and Institutions in the Armenian Transnation, “Diaspora: A Journal of Transnational Studies”, 2000, Volume 9, Number 1, pp. 107-136.
96. Tölölyan Kh., Rethinking Diaspora(s): Stateless Power in the Transnational Moment, “Diaspora: A Journal of Transnational Studies”, 1996, Volume 5, Number 1, pp. 3-36.
97. Tölölyan Kh., The Contemporary Discourse of Diaspora Studies, “Comparative Studies of South Asia, Africa and the Middle East”, 2007, 3, pp. 647-655.
98. Tölölyan Kh., The Nation-State and Its Others: In Lieu of a Preface, “Diaspora: A Journal of Transnational Studies”, 1991, Volume 1, Number 1, pp. 3-7.

Ռուսերեն

99. Армяне в истории и культуре России XVIII-XX вв.: Материалы Международной научной конференции. Москва – Пушкино, 26-28 октября 2016 г., Ростов-на-Дону, 2016.
100. Армяне юга России история, культура, общее будущее материалы Всероссийской научной конференции, Ростов-на-Дону, 2012.
101. Арутюнян Ю., Об армянской диаспоре в России: этносоциологическое исследование армян Москвы и Краснодара, Ереван, 2011.
102. Дятлов В., Армяне России: диаспоральные стратегии интеграции, «21-й ВЕК» 2007, N 2, с. 60-70.
103. Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: очерки социокультурной типологии, Ереван, 2009.
104. Мелконян Э., Армянская диаспора в ее сосуществовании с внешним миром (1920-1950-е гг.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 2002, թիվ 2, էջ 70-82.
105. Российские армяне. Этносоциологическое исследование, под ред. Ю.В. Арутюнян, Р.С. Карапетян, Л.В. Остапенко, Ереван, 2016.
106. Санджян А., Армянские общины в условиях гражданской войны (сравнение Ливана и Сирии), “Диаспоры” независимый научный журнал, 2015, N 1-2, с. 55-88.
107. Санджян А., Подъем и упадок армянской общины Ливана, “Диаспоры” независимый научный журнал, 2004, N 1, с. 123-149.
108. Сущий С., Армяне юга России и Крыма (геодемографический очерк), Ростов-на-Дону, 2015.

Տիգրան Հայկի Ղանալանյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

(ուսումնամեթոդական ձեռնարկ)

Тигран Айкович Ганаланян

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

(учебно-методическое пособие)

Tigran Hayk Ghanalanyan

SOME ISSUES OF HISTORY OF ARMENIAN DIASPORA

(educational-methodological manual)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գույումջյանի

Ստորագրված է տպագրության՝ 10.06.2021:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 5.25:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am